




1944

Ծ Յ Ղ Ղ
Ե.Տ.ԵԲ
Համար տողացի
Հունվար

ԲԱՐՈՒՄ

ՊԵՏՏՈՆԵԱՆ ԵՄՍԵԳԻՐ
ՀԱՅԸՆԴԵՏԱԿԱՆ ԵԹՈՒՌՅՈՒՆ

Ս. ԷԶՍԻԼՈՒՆԻ



1944

Հ Ր Ա Մ Ա Ն Ա Ի
ԱԶԳԸՆՏԻՐ ՏԵՂԱԿԱԼԻ
ՍՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ
Տ. ԳԷՈՐԳ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻ





ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳՆՏԻՐ ՏԵՂԱԿԱՆ ԳԵՎՈՐԳ ԱՐԺԵՊԻՍԿՈՊՈՍ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Հայ եկեղեցու պարտքն իր ժողովրդի հանդեպ	1
Պատճենակաճ	
2. Տ. Տեղակալի հեռագիրը ՍՍՌՄ ժողկոմսովետի նախագահ Ի. Վ. ՍՏԱԼԻՆԻՆ	4
3. ՍՍՌՄ ժողկոմսովետի նախագահ Ի. Վ. Ստալինի պատասխան-հեռագիրը	5
4. Կոչ հայ ժողովրդին	6
5. Կոչ հայ հավատացյալ ժողովրդին	9
6. Տ. Տեղակալի անունով ուղարկված հեռագրեր	11
7. «Սասունցի Դավիթ» տանկային շարասյուն կառուցելու համար ստացված նվիրաբերությունները	14
8. Կարմիր Բանակի զբաղմունքային զորքերի հրամ. օգն. գնն. լեյտ. Կարոնկովի հեռագիրը	13
Հայոց եկեղեցի	
9. Սուրբն ծ. վարդապետ—Ուղևորություններ Հյուսիսային Կովկասում	15
10. Տաճատ ավ. քահ. տ. Վարդապետ — Սրբապատկերների օծումը Երևան քաղաքի ս. Սարգիս եկեղեցում	18
Ռուսաց եկեղեցի	
11. Տ. Տեղակալի և Սերգեյ պատրիարքի փոխանակած հեռագրերը	19
12. Ռուսաց եպիսկոպոսների ընդհ. ժողովի կոչը	20
Կրճատ-պատմական	
✓ 13. Ակադեմ. Ստ. Մալխասյան—Ե՞րբ են հայերն ընդունել քրիստոնեություն	22
✓ 14. Ակադեմ. Հ. Անադյան—Հայ տառերի գյուտի ստույգ թվականը	27
✓ 15. Գ. Լեվոնյան—Հովհաննես վ. Մրջրուզ	29
✓ 16. Եզմիկ Վարդապետ—Ս. Էջմիածնի Մ. Տաճարի ձեռագիր ավետարանները	35
✓ 17. Պրոֆ. դոկտ. Աշոտ Աբրահամյան—Պաշտոնը երեց Կաֆայեցու տարեգրությունը	39

ՀԱՅ ԵԿԵՂԵՑՈՒ ՊԱՐՏՔԸ ԻՐ ԺՈՂՈՎՐԴԻ ՀԱՆԴԵՊ

«Հովիւ քաջ զանձն իւր դնէ ի վերայ ոչխարաց, իսկ վարձկանն, որ ոչ է հովիւ, որոյ ոչ իւր են ոչխարք, իբրեւ տեսանէ զդայն զի դայ, թողու զոչխարն եւ փախչէ եւ դայն յափշտակէ զնոսա եւ ցրուէ» (Յովհան. աւետ.) :

Քրիստոսաւմադ այս պատգամին հաւատարիմ հայոց եկեղեցին, որպէս ալ թուն հովիւ, դարեր շարունակ պաշտպանել է իր ժողովրդի պայքարն օտար բռնակալների տիրապետութեան դեմ. նրա լավագույն ներկայացուցիչները փոթորիկի ու արհաւիրքի ժամին, որպէս անձնակեր առաջնորդներ, խրախուսել են իրենց զավակներին՝ լարելու բոլոր ուժերը, մաքառելու դժվարութիւններէ դեմ, կռիւլու հանուն մայր հայրենիքի ազատութեան և անկախութեան: Հայ եկեղեցու աշխարհի ներկայացուցիչներ են հանդիսացել Ներսէս Մեծը, Ղեվոնդ Երեցը և բազմաթիւ այլ եկեղեցական հայրեր, որոնց պայծառ հիշատակը մինչև այսօր տոնում է հայ եկեղեցին:

Հայ անձնակեր հոգեւորականները ահա վոր թշնամու դեմ մղվող պայքարի ժամին խաչն ու ամբաստանը ձեռքներին դնելի հաղթութիւն են առաջնորդել հայ զորքին, ոգեշնչել Ղեվոնդ երեցի հորդորական խոսքերով՝ «Մի թուլութեամբ լքանիցիմք, այլ պնդութեամբ սրտի և հաստատուն հաւատովք կամակար յարձակեսցուք ի վերայ թշնամեացն, որ յարձակեալ դան ի վերայ մեր: Մեր յոյս մեղ կրկին երևի մեռանիմք՝ կեամք եւ եթէ մեռուցանեմք, մեղ նոյն կեանք առաջի կան» (Յղիչէ):

Ուղաղ կյանքի տարիներին ևս հայ եկեղեցականներն իրենց նվիրել են մեր եկեղեցու պայծառացմանը, հիմնել են վանքեր, նրանց կից դպրոցներ, գրի են

առել իրենց ժամանակի պատմական անցքերը, հարստացրել են եկեղեցական գրահանութիւնը, ճոխացրել հոգեւոր տաղերգութիւնը: Այս ասպարեզում նույնպէս հայ եկեղեցին ավել է աշխարհի փայլուն գործիչներ, ինչպէս են՝ Ներսէս Մեծ, Մահակ Պարթե, Հովհան Մանդակունի, Ներսէս Ենորհալի և ուրիշ խնկելի դեմքեր:

Հայոց պատմութեան մեջ քաղաքական անկման շրջանումն էլ հայ եկեղեցու առաջավոր ներկայացուցիչները, հաւատարիմ մնալով մեր նախնայաց ավանդներին, ջանացել են իրականացնել մեր ժողովրդի տենչերը, օգնել են նրան վերականգնելու իր քաղաքական անկախութիւնը:

Հայ ժողովրդի դարավոր այդ երազներն իրականացած ենք տեսնում այսօր: Ռուս մեծ ժողովրդի հետ միասին նա ձեռք բերեց իր քաղաքական ազատութիւնը, ստեղծեց իր սեփական պետական կյանքը՝ Հայաստանի Սովետական Ռեսպուբլիկան:

Նորաստեղծ Ռեսպուբլիկան կարճ ժամանակամիջոցում կերտեց նյութական բարձրարժեք կուլտուրա: Նախկին ճշգրտված, արհամարհված Հայաստանն աղքատութեան ճիրաններից ազատվելով, վերականգնացավ և վերածվեց ծաղկած, դուրավոր ու հարուստ մի երկրի:

Առաջնորդելով իր նոր առաջավոր դադարները, Սովետական Ռեսպուբլիկան հայտարարեց իր ճիշտ ու կրօնի ազատութիւնը և եկեղեցու անջատումը պետութիւնից:

Մեր ժողովրդի և եկեղեցու թշնամիները տարածեցին մոլորեցուցիչ լուրեր, որ իբր թե Սովետական իշխանութիւնը ճնշում է գործադրում հայ եկեղեցու և նրա կենտրոնի՝ Ս. Էջմիածնի վրա: Դա հերյուրանք է: Իրականութիւնն այն է,

որ նոր ռեսպուբլիկական կարգերում եկեղեցին ենթակա չէ որևէ ճնշման և միանգամայն դերժ է ամեն տեսակ միջամտումից նրա ներքին գործերին:

Վերոհիշյալ ակտը եկեղեցու իրավունքների սահմանափակումը չէ կամ իրավունքների խախտումը, ինչպես կամենում են մոլորեցնել հավատացյալներին մեր հայրենիքի և եկեղեցու թշնամիները: Պետական այդ ակտը, ընդհանրապես, մեր եկեղեցուն ընձեռում է լիակատար պայմաններ նրա ազատ ու անկաշկանդ գոյության համար:

Եկեղեցիների գոյությունը Սովետական Միության բաղաձայնի քաղաքներում, Ամենայն Հայոց կաթողիկոսի ընտրության համար 1932 թվին իջմիածնում գումարված Աղգային ժողովը, 1941 թվին իջմիածնում նույն նպատակով գումարված երկրորդ Աղգային ժողովը արտասահմանյան թեմերի պատգամավորների մասնակցությամբ, Հայրապետական պաշտոնական ամսագիր «Իջմիածնի» հրատարակությունը ներկա տարում, Հայկական Սովետական Ռեսպուբլիկայի Ժողովածուի 14-ն նոյեմբերի 1943 թ. որոշումը կազմակերպելու Ժողովումսովետին կից Հայ Լուսավորչական եկեղեցու գործերի խորհուրդ, որը իրականացնելու է կապը Հայկական ՍՍՌ կառավարության և Ամենայն Հայոց կաթողիկոսի միջև այն հարցերի շուրջը, որոնք Հայկական ՍՍՌ կառավարության լուծումն են պահանջում, այս բոլորը միաբերան վկայում են մեր եկեղեցու ազատ ու անկաշկանդ գոյությունը Սովետական իշխանության օրոք:

Հայոց եկեղեցին իր ժողովրդի նկատմամբ ունեցած սիրո և հոգատար վերաբերմունքի ցայտուն օրինակներ ցուցաբերեց ներկա հայրենական մեծ պատերազմում: Եկեղեցին, մնալով հավատարիմ մեր նախնյաց ավանդներին, անմասն չմնաց մեծ Միության ժողովուրդների ազատագրական այն մեծ պայքարին, որին մասնակից է հերոսական հայ ժողովուրդը ընդդեմ գերմանա-

կան Փաշիզմի, ընդդեմ մարդկության և կուլտուրայի ատելի թշնամու:

Մայր Աթոռն իր ժամանակին հանդես եկավ հայրենասիրական կոչերով ու հավատացյալ հայ համայնքներին հորդոր կարգաց բոլոր միջոցներով աջակցել հայրենական սրբազան պատերազմին, ամուր պաշտպանել իր զավակների արյունով նրվածած սրբազան ազատությունը:

Ամեն հայ մարդ, որ նախանձախնդիր է իր հայրենիքի՝ Սովետական Հայաստանի ազատության ու նրա բարգավաճման, հայ ժողովրդի ֆիզիկական անվտանգության ու հզորացման, պետք է հիշի գերմանական մարդակերների զաղանուկությունները առաջին համաշխարհային պատերազմին: Այդ պատերազմում գերմանական կառավարությունը սպանդանոց դարձրեց Տաճկահայաստանը և բնաջինջ արավ հարյուրհազարավոր անմեղ հայերի:

Գերմանական Փաշիզմը ծրագրեց նույնպիսի սպանդանոց դարձնել նաև Սովետական Հայաստանը ներկա պատերազմում: Սակայն այդ նրան չհաջողվեց: Հայ անվահեր կտրիճները, վառված դյուցադնական պայքարի և դիմակալության ոգով, Սովետական Միության բաղմբերանդ ժողովուրդների անվահեր զավակների հետ միասին հետ չարտեցին Փաշիստական հորդանքերին կովկասի դռներից և իրենց հայրենիքը փրկեցին բնաջնջումից, թալանից ու կոլոպուտից:

Ամեն հայ մարդ, որ ծանոթ է հայոց պատմության, պետք է իմանա, որ առաջին դեպքն է պատմության մեջ, երբ Հայաստանը դերժ է մնում ավերից ու կոտորածից ազդերի միջև տեղի ունեցող պատերազմներում: Սովետական Հայաստանի ազատության նախանձախնդիր ամեն հայ մարդ պետք է իմանա, որ Հայաստանը փրկվեց այս պատերազմի արհավիրքից միմիայն շնորհիվ Սովետական Միության հզորության և կարմիր Բանակի հերոսության:

Այն ժամին, երբ հաղթական կարմիր Բանակը ջախջախելով տառապեցնող թշնամուն,

արտաքսում է մեր սրբազան Հայրենիքի սահմաններից, Մայր Աթոռը հրատարակում է իր պաշտոնական ամսագիրը՝ «Էջմիածին»-ը:

Հայրապետական ամսագիրը հանդիսանում է այն միջոցը, որը պետք է համախմբի սփյուռքի բոլոր հայերին իրենց սրբազան Հայրենիքի շուրջը, Մայր Աթոռի շուրջը: Հայությանն ուղղված մեր կոչի մեջ ասել ենք. «Հայը, բացի Սովետական Հայաստանից, չունի այլ հայրենիք: Հայը Հայաստանից դուրս չունի այլ հաստատուն կռուան, բայց եթե Մայր Հայրենիքը, հայ եկեղեցին և նրան դիմավորող Ամենայն Հայոց Հայրապետութիւնը Ս. Էջմիածնի Հայրապետական Աթոռով»:

Այս պատգամով հրապարակ է դալիս Հայրապետական ամսագիրը, նույն այդ

պատգամով նա կշարունակի իր գոյութիւնը և հետագայում:

Հայրապետական Աթոռը հրավիրում է աշխարհի բոլոր մասերում ցրված հայերին համախմբել մեր Մայր Հայրենիքի՝ Հայաստանի շուրջը, Հայրապետական Մայր Աթոռի՝ Ս. Էջմիածնի շուրջը, պայքարել Փաշիզմի դեմ, մեր սրբազան Հայրենիքի, ողջ ազատասեր մարդկության ատելի թշնամու դեմ:

Ամենայն Հայոց Հայրապետութիւնն իր օրհնութիւնն է հղում իր հաւատացյալ որդիներին և աղոթում, առ Աստված նրանց բարեկեցության և բարօրության համար:

Ամենայն Հայոց Հայրապետութիւնը հաւատացած է նաև, որ նա իր ձեռնարկումների ժամանակ կստանա իր հաւատացյալ որդիների գործնական աջակցութիւնը:

ԱՄԵՆ՝ԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԸՆՏԻՐ
ՏՆԴԱԿԱԼ ԳԵՎՈՐԳ ԱՐԳԵՊԻՍԿՈՊՈՍ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳՈՒՅԻՐ ՏԵՂԱԿԱԼ Տ. ԳԵՎՈՐԳ
ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԶԵՈՐԵՔԶՅԱՆԻ 1943 թ. ՀՈՒՆՎԱՐԻ 20-Ի ՀԵՌԱԳԻՐԸ
ՍՍՈՄ ԺՈՂՎՈՄՍՈՎԵՏԻ ՆԱԽԱԳԱՀ Ի. Վ. ՍՏԱԼԻՆԻՆ

Մոսկվա, Կրեմլ,

ԻՈՍԻՓ ՎԻՍՍԱՐԻՈՆՈՎԻԶ ՍՏԱԼԻՆԻՆ

Մեծարգո Իոսիփ Վիսսարիոնովիչ:

Ձեր հանճարեղ ղեկավարութեամբ և Աստծո ողորմածութեամբ Կարմիր Բանակը հաղթականորեն ջախջախում է արյունոտ և ատելի թըշնամուն, վռնդելով նրան մեր սրբազան հողից: Կարմիր Բանակի շարքերում, ՍՍՈՄ մյուս ժողովուրդների հետ միասին, մեր հայրենիքի թշնամիները դեմ հերոսաբար մարտնչում են նաև հայ ժողովրդի զավակները:

Կատարելով իմ պարտքը հայրենիքի հանդեպ, աղոթում եմ Ամենաբարձրյալին՝ սովետական զենքի հաղթության համար, փառապանծ Կարմիր Բանակի հզորությունն էլ ավելի ուժեղացնելու և թշնամու վերջնական ջախջախումն արագացնելու համար: Էջմիածնի կաթոլիկոսարանը «Սասունցի Դավիթ» անվան տանկային շարասյունը կառուցելու ֆոնդին հատկացնում է բրիլիանտներով զարդարված մի թանկարժեք պանակ և այլ թանկարժեք իրեր պլատինից ու բրիլիանտներից՝ ավելի քան 800 հազար ռուբլի արժողութեամբ, 1000 անգլիական ֆունտ ստերլինգ և 50 հազար ռուբլի:

Խնդրում եմ Ձեր կարգադրությունը՝ ՍՍՈՄ Պետրանկում հատուկ հաշիվ բանալու մասին:

Միաժամանակ հատուկ կոնդակով դիմում եմ աշխարհիս բոլոր հավատացյալ հայերին, որ իրենց խնայողություններով մասնակցեն «Սասունցի Դավիթ» անվան տանկային շարասյան կառուցմանը: Լիովին հավատացած եմ, որ ինչպես տեղական, այնպես էլ արտասահմանյան հայերը կարճադանքեն մեր հովվական կոչին, ինչպես արձադանքեցին պատերազմի սկզբին մեր կոնդակին, կազմակերպելով հայկական բոլոր զաղուլթներում Կարմիր Բանակին և տուժած բնակչությանն օգնելու կոմիտեներ, որոնք հավաքեցին և ուղարկեցին ավելի քան 15 հազար զուլար ու ներկայումս շարունակում են իրենց գործունեությունը:

Թանկագին Իոսիփ Վիսսարիոնովիչ, ընդունեցե՛ք մեր օրհնությունը և հավատացյալ հայերի ու հոգևորականության ողջունը:

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱԶԳՈՒՅԻՐ ՏԵՂԱԿԱԼ
ԳԵՎՈՐԳ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԶԵՈՐԵՔԶՅԱՆ

ՍՍՌԻ ԺՈՂԿՈՄՍՈՎԵՏԻ ՆԱԽԱԳԵՀ Ի. Վ. ՍՏԱԼԻՆԻ ՊԵՏԱՍԽԱՆ—ՀԵՌԱԳԻՐԸ

Ի պատասխան Ամենայն Հայոց կաթողիկոսի տեղակալ Տ. Գեվորգ արքեպիսկոպոսի հեռագրի 1943 թ. հունվարի 26-ին ստացված է ՍՍՌԻ Ժողկոմսովետի նախագահ Ի. Վ. Ստալինի հետևյալ հեռագիրը.—

Է Ջ Մ Ի Ա Ծ Ի Ն

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՏԵՂԱԿԱԼ ԳԵՎՈՐԳ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԶԵՈՐԵՔՅԱՆԻՆ

Խնդրում եմ իմ ողջույնը եվ Կարմիր Բանակի շնորհակալությունը հայտնել հավատացյալ հայերին ու Էջմիածնի կաթողիկոսարանի հոգեվորականությանը, որը միջոցներ է մոծել «Սասունցի Դավիթ» անվան տանկային շարասյուն կառուցելու համար:

ՍՍ ՌԻՄ Պետրանկում հատուկ հաշիվ քանալու համար ցուցում է տրված:

Ի. ՍՏԱԼԻՆ



Ամենայն Հայոց Հայրապետական ազգընտիր տեղակալ Տ. Գեվորգ արքեպիսկոպոսը հայրենական պատերազմի օրերին հայ ժողովրդին ուղղել է հետևյալ կոչերը, որոնցով հայ ժողովրդին հաղորում է համախմբվել Սովետական Հայրենիքի շուրջը և ամուր կրճով պատգամել իր անկախությունը:

ԿՈՉ ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻՆ

«Վասն Սիոնի ոչ լռեցից և վասն Երուսաղեմի ոչ ճեղքեցից»:

«Ինչ էլ գա գլխիս,—ասում է մարգարեն,—ես Սիոնն ու Երուսաղեմը, իմ հայրենի քաղաքն ու տաճարը մոռանալ չեմ կարող»:

Մեր հայրենիքը Մայր Հայաստանն է: Հայ ժողովրդի սրբությունն սրբոցը՝ Ս. Էջմիածինը, հայ եկեղեցուն ծագման ու հաստատության օրրանը և նրա կենտրոնը:

Հանուն հայրենիքի, հանուն մեր հավատի և խղճի ազատության բողոքելով անարդարությունների և օտար բռնակալության դեմ՝ մեր նախնիքը դարեր շարունակ կյանքի և մահվան պայքար են մղել բռնակալության դեմ, որ մարմնի գերության հետ հոգու գերության էր ձգտում:

Հայ ժողովրդի այս դուռցաղնական պայքարի և դիմակալության ոգին ցայտուն արտահայտված է Վարդանանց պատերազմի մեջ: Հայ պատմության այդ չրջանում հայ մարդու համբերության բաժակը լցված էր օտար բռնակալների անարդարության երեսից:

Բողոքող ուժերին ձայն էր պետք, հերոսական հոգի էր պետք, պայքարող ուժ էր պետք, արդարության ձայնը հնչեցնող և նրա դրոշակը բարձր պահող էր պետք: Եվ ահա Հայրենիքի սիրով վառված, քրիստոնեական հոգով դաստիարակված, հայ ժողովրդի ազատության համար զոհվելու պատրաստ կանգնած է մեր առաջ քաջ Վարդանը:

Նա կանգնած է որպես հաղթական հերոս, հավատարիմ, անկաշառ և անդավաճան սպասավորը հայ ժողովրդի: Նա

մարմնացումն է հինգերորդ դարի ոգու և արտահայտիչը հայ ժողովրդի բնութագրի՝ արդարամտության, անձնվիրության և ազատասիրության:

Այս առթիվ հիշենք և լսենք հայ մեծ պատմագիր ոսկեծղի Նղիշին.

«Թող մեր արյունը թափվի մարտիրոսների արյան նման, միայն թե մեր հայրենիքն ու եկեղեցին չընկնեն հեթանոսների ձեռքը»:

Մի՞թե կարելի է չօգտվորվել, տեսնելով երիտասարդների կտրճությունը, որոնք ի սեր արդարության և ճշմարտության գերադասում են հաղթական մահը, քան անարդ կյանքը: Մի՞թե հնարավոր է չհուզվել, տեսնելով կանանց և օրիորդների անձնվիրությունը հանուն հայրենիքի և խղճի ազատության:

Այսպես էին մեր նախնիքը, որոնց պարտական ենք մեր ազգային և կրոնական կյանքը՝ մեր դոյությունը:

Վարդանանց հաղթական ոգին ապրել ու ապրում է տակավին մեր մեջ և այսօր:

Մենք չսխալվեցինք մոռանանք հայ ժողովրդի անցյալում կրած տառապանքներն ու դրկանքները, կոտորածներն ու գերեզմարությունը: Մենք միշտ պիտի հիշենք, որ անցյալում բազմիցս մեր երկիրը եղել է օտար բռնակալների և վայրագ ու անխղճ ազգերի մրցության ասպարեզ, որի հետևանքով ավերակների կույտ էր դարձել:

Հայ եկեղեցին օրհնել է հայ ժողովրդի հերոսական դիմակալության ոգին, ներշնչել է ազգային անկախության դադարաբար, մշակել է ազգային ինքնազգի-

տակցութեան զգացումը և, խաչն ու ամենատարանը ձեռքին քաջալերելով Հայ զորքը, դեպի հաղթութիւն է առաջնորդել նրան:

Իմ սիրելի՛ Հայ զավակունք:

Մենք այսօր հիշում ենք մեր նախնայաց հերոս և անձնագործ ոգին, մեր բազմաշարժար ժողովրդի բազմիցս կրած տառապանքներն ու զրկանքները այն պատճառով, որ այսօր դամոկլյան սրի պես վերստին կախված է մեր հայրենիքի, ժողովրդի և եկեղեցու պլինին ստրկացման վտանգը:

Հանդես է եկել մի նոր բիրտ ույժ՝ Փաշիգժը, որ հակառակ է ազատութեան և կուլտուրայի, թշնամի է քրիստոնեական եկեղեցուն, կեղեքիչ՝ ամբողջ մարդկութեան:

Փաշիգժը կրողն է բռնապետութեան և պատերազմի, ավերողը ժողովրդի ստեղծած նյութական և կուլտուրական արժեքների: Փաշիգժը կողոպուտի և մահուան դրույթ է:

Հենց այդ Փաշիստական բիրտ ույժն է, որ նենգաբար ներխուժել է մեր երկիրը, ավեր ու մահ բերելով իր հետ:

Փաշիգժը ծրագրել է վերահաստատել մեր երկրում ցարիզմը: Նա սպառնում է ինչպես Սովետական Միութեան բոլոր ռեսպուբլիկաններին, նույնպես նաև Հայկական ռեսպուբլիկային՝ առաջ բերել ռեակցիա և ստրկացնել:

Քսան և ավելի տարի է, որ Սովետական Միութիւնը վարում է խաղաղասեր քաղաքականութիւն արտաքին աշխարհի նկատմամբ և իր ամբողջ մտավոր, բարոյական և նյութական ույժը տրամադրել է Սովետական Միութեան երկրների շինարարութեան, նրա բազմերանգ ժողովուրդների հզորացման և նրանց մտավոր ու ազգային կուլտուրայի զարգացման:

Ինչպես արևի կենսատու ճառագայթների ազդեցութեան շնորհիվ գլխաթանում ու կենդանանում է թառամած ծաղիկը, այնպես էլ մեր Մայր Հայաստանը ոռոսմեծ ժողովրդի աջակցութեան շնորհիվ ազատութեան ճիրաններից և ավերակների

ծոցից ելնելով, վերակենդանացավ և դարձավ զորավոր ու հարուստ երկիր: Հայ քրտնաջան ժողովուրդը այդ տարիների ընթացքում ստեղծեց նյութական ու կուլտուրական շատ արժեքներ:

Մեր ժողովրդի և եկեղեցու թշնամիները հայութիւնը ջլատելու նպատակով տարածեցին մոլորեցուցիչ լուրեր, որ իբր թե Սովետական իշխանութիւնը կործանում է Հայ եկեղեցու կենտրոնը՝ Ս. Էջմիածինը: Ուր Սովետական իշխանութիւնը չի միջամտում եկեղեցական գործերին և որ Սովետական Միութեան մեջ պահպանված է խղճի ազատութիւնը, այդ հաստատում է նորեքս Ս. Էջմիածնում գումարված Աղգային՝ եկեղեցական ժողովը արտասահմանյան թեմերի պատգամավորների մասնակցութեամբ: Նույնը հաստատում են Սովետական երկրի բազմաթիւ քաղաքներում գոյութիւն ունեցող Հայ եկեղեցիները:

ՀԱՅԸ՝ ԲԱՑԻ ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻՑ՝ ՉՈՒՆԻ ԱՅԼ ՀԱՅՐԵՆԻՔ: Հայը Հայաստանից դուրս չունի այլ հաստատուն կռուան, բայց եթե Հայ եկեղեցին և նրան գլխավորող Ամենայն Հայոց Հայրապետութիւնը Ս. Էջմիածնի Հայրապետական Աթոռով:

Աշխարհի բոլոր ազգերի կատարյալ համակրանքը և Սովետական Միութեան 200 միլիոն ժողովրդի միակամ և միասիրտ հուրդ գործելակերպը, որով նա հայրենի սրբազան պատերազմ է մղում իր հայրենիքի, նրա քաղաքական ազատութեան և տնտեսական ու կուլտուրական նվաճումները պաշտպանութեան համար, դրավական է Սովետական Միութեան վերջնական հաղթութեան:

Աջակցել Սովետական Միութեան նըշանակում է աջակցել հայրենիքին: Սովետական Միութեան հաղթանակը հաղթանակն է նաև Հայ ժողովրդի:

Ամեն Հայ մարդ, որ նախանձախնդիր է իր հայրենիքի, Սովետական Հայաստանի

բարդավաճման, կաշակցի անշուշտ և թշնամուհ և ապրեցնել մեր ազգը:
 կաշակցի Սովետական Միութիւնը: Թող Տերը անասաւ, պահէ Սովետա-
 թող ընդմիշտ կենդանի մնա մեր մեջ կան երկիրը՝ յուրախութիւն Սովետական
 վարդանանց պայքարի ու դիմակալութեան Միութեան ժողովուրդներ և ամբողջ քա-
 ողին, որը միայն կարող է հաղթել անօրէն զաւակիր ժողովուրդին:

ՆԱԽԱԳԱՀ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՀՈԳԵՎՈՐ ԽՈՐՀՐԴԻ,
 ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՅ ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳՆՏԻՐ ՏԵՂԱԿԱՆ
 ԳԵՎՈՐԳ ԸՐԲԵՊԻՍԿՈՍ

30 հուլիսի 1941 թ.
 Ս. Էջմիածին

ՀԱՅ ՀԱՎԱՏԱՑՑԱԼ ԺՈՂՈՎՐԴԻՆ

Մեկ ու կես տարի է, որ զերմանական զորաբանակները ներխուժել են մեր հայրենիքը, Միության ժողովուրդներին ստրկացնելու և նրանց երկիրը իրենց նպատակների համար չահագործելու դիտավորությամբ:

Մեկ ու կես տարի է, որ Ռուս ժողովուրդն էլ Միության մյուս ազգերի հետ, ամեն զոհաբերություն հանձն առնելով, համառ դիմադրություն է ցույց տալիս՝ պաշտպանելու համար իր պատիվը, իր հայրենիքն ու իր ազատությունը:

Պարծանքով պիտի շնորհակալվենք, որ հայ ժողովուրդն էլ, հավատարիմ իր անցյալ պայքարող ոգուն, իր բոլոր հոգով նվիրվեց հայրենական ահապոր պատերազմին, քաջարար և անձնվիրաբար կռվեց նացիստների աշխարհակալության և բռնակալության դեմ, պատերազմի ընթացքում բաղամաթիվ հերոսներ տվեց հանուն մեծ Միության պատվի ու հաղթանակի, հանուն ընդհանուր հայրենիքի ազատության և անկախության, հանուն մարդկության լավագույն ապագայի:

Մանր օրեր ապրեց մեր հայրենիքը, չափ դառնություններ, ճաշակեց մեր ժողովուրդը, բայց այդ բոլորը տարավ համբերությամբ, ղեկավարությանը դեմ մաքառելով, իր բոլոր ուժերը լարելով և տրամադրելով հայրենիքի ազատության գործին, հուսալով և հավատալով հայրենական պատերազմի հաղթական վախճանին: Եվ չսխալվեց:

Այսօր բախտի անիվը դարձել է դեպի մեզ. զերմանական զորքերի ռազմա-

կատները ամենուրեք ճեղքվել են կարևոր ուղղություններով և նախաձեռնությունն անցել է կարմիր Բանակի ձեռքը:

Ամբողջ երկիրը, հայրենասիրական ոգևորությամբ լցված, ջերմաբին ողջունում է հայրենիքի պաշտպանության վերին ղեկավարության ու հերոս մարտիկներին: Սակայն մեր առաջ դեռ դժվարին պայքար կա, որը պահանջում է մեզնից մեծ զոհաբերություններ:

Սովետական Միության բոլոր ժողովուրդները, հայրենասիրական մեծ ոգևորությամբ տոգորված, և՛ թիկունքում, և՛ ճակատում, մեծ թափով ու լարված, անձնվիրաբար աշխատում են և կռվում հայրենական պատերազմի հաղթական վախճանը ապահովելու համար:

Սովետական Միության կրոնական համայնքների բոլոր ներկայացուցիչները՝ և՛ քրիստոնյա և՛ ոչ քրիստոնյա՝ իրենց հոտով առատ նվիրաբերությամբ նպաստում են թիկունքի զորացման և ճակատի հաջողության:

Էջմիածինն էլ, տեսնելով հայ ժողովրդի ոգևորությունը և անձնվեր աշխատանքն ու պայքարը հանուն հայրենիքի ազատության, իրեն իր ժողովրդի կամքի արտահայտություն, իրավունք համարեց առատ նվիրատվությամբ աջակցել հայրենական պատերազմի հաջողության՝ խընդրելով Պետական բանկում հատուկ հաշիվ բանալ նվիրատվությունները մուծելու համար:

Իմ սիրելի ժողովուրդ, դո՛ւ, որ պատերազմի սկզբից նվիրված ես Հայրենիքի

պաշտպանության և ցանկացել ես տեսնել հայրենական պատերազմի վախճանը, դո՛ւ, որ միշտ հետևել ես Ս. Էջմիածնին, դու այսօր էլ անշուշտ առատորեն կբերես քո խնայողությունները, մասնակցելով «ՍԱՍՈՒՆՑԻ ԴԱՎԹԻ» անվան տանկային շարայան կառուցման: Առավել ևս դու, արտասահմանի հայություն, նամանավանդ Ամերիկայի հայեր, որ ազատ եք մնացել ահեղ պատերազմի արհավիրքներից և Մայր երկրի, ձեր հարազատ եղբայրների ապրումներով եք տառապել ու նրա մղած ազատագրական պատերազմի հաջողության համար մինչև այժմ չեք խնայել նյութական ու բարոյական աջակցությունը Կարմիր Բանակին և Մայր երկրի որբացյալ ընտանիքներին, վստահ եմ՝ թե այժմ էլ ձեր առատ

նվերներով կնպաստեք թշնամու շուտափուլ ջախջախմանն ու վտարմանը մեր երկրից:

Օրհնում եմ քեզ, հայ ժողովուրդ, և մաղթում, որ Տեբը քո պայքարող ոգին հանուն ազատության և հանուն քրիստոնեական վեհ գաղափարների միշտ կենդանի պահե:

Օրհնում եմ Կարմիր Բանակը և նրա Գերագույն Հրամանատարությունը և մաղթում, որ Բարձրյալը առավել ևս զորացնե նրանց՝ հայրենիքը պաշտպանելու և թշնամուն ջախջախելու վտարելու մեր երկրից:

Մաղթում եմ Ամենաբարի Աստծուն, որ ազատե մարդկությունը այս արհավիրքներից և խաղաղություն պարգևե աշխարհին:

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳՆՏԻՐ ՏԵՂԱԿԱԼ

ԳԵՎՈՐԳ ԱՐԲԵՊԻՍԿՈՊՈՍ

2 փետրվարի 1943 թ.

Ս. Էջմիածին.

ի պատճառով ազգային Տ. Տեղակալի կոչելի, հայ ժողովուրդն արձագանքում է իր հայրենասիրական բուռն զգացմունքներով և իր պատրաստակամությունը հայտնում՝ բոլոր ուժերով օգնելու փառապանծ Կառմիր Բանակիճ վերջնական հաղթանակը քանելու համար *):

ՆՅՈՒՆ ԹՈՐՔ—ԷՋՄԻԱՄԻՆ.

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՒՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՏԵՂԱԿԱԼ ԳԵՎՈՐԳ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԶԵՈՐԵՔՅԱՆԻՆ

Մենք գոհունակությամբ հաղորդում ենք Ձեզ, որ Ամերիկայում ապրող հայերին ուղղած Ձեր կոչը լայն արձագանք գտավ: Մարտի 7-ին Նյու-Յորքում կայացավ այստեղ ապրող հայության բոլոր տարրերի մեծ միությունը, որտեղ ընտրվեց կոմիտե՝ «Սասունցի Դավիթ» տանկային շարասյան կառուցման ֆոնդի օգտին միջոցներ հավաքելու համար:

Մենք ողջունում ենք Ձեր հայրենասիրական ելույթը Կառմիր Բանակին օգնելու դործում, մենք հանձն ենք առնում ամբողջովին օժանդակել այդ ձեռնարկմանը, մասնաշաղկանացին ու տարածել Ձեր կոչը և ապահովել միջոցները հավաքման հաղորդությունը ու հավաքված միջոցներն անհապաղ ուղարկել Ձեզ:

Մենք հույս ունենք հավաքելու 150 հազար դոլլարից ավելի:
Սպասում ենք Ձեր օրհնությանն ու կոնդակին:

Գործադիր կոմիտեի նախագահ՝ պրոֆ. ՀԱՐՈՒԹԵՈՒՆ ԴԱԴՈՒԲԱՆ,
Գանձապահ՝ պրոֆ. ՏԻԳՐԱՆ ԿԱՐԻԿՅԱՆ,
Փոխնախագահ՝ Հայր արժանապատիվ՝ ՄԻԼԱՆ ԿԱՊԱՅԱՆ,
Քարտուղար՝ ՕԳՍԵՆ ՍԱՐՅԱՆ (պրոգրեսիվ լիգայի քարտուղար),
Բանաստեղծ՝ ԿԱՐԱՊԵՏ ՍԵՂԱԼ
«Լրաբեր»-ի խմբագիր՝ ՊԱՏՐԻԿ ՍԵԼՅԱՆ:

ՀԱՅԿԱԶ ԳՈՒՐԳԵՆՅԱՆ, ՌՈՒԲԵՆ ԶԱՎՅԱՆ, ՍՐԱՄ ԶԱՐԳԱՐՅԱՆ,
ԲԺԻՇԿ ՄԻՀՐԱՆ ԵԿՉԵՐՅԱՆ, ԱՆԱՆՅԱ ՈՒԼԻԲԵԿՅԱՆ ԲԺ. ԲՈՂԴԱՆ ԲԱԶ-
ԴԱՍՏԱՐՅԱՆ, ԱՐՇԱՎԻՐ ՇԱՄԻԼՅԱՆ, ՄԻՀՐԴԱՏ ՏԻՐԱԿՅԱՆ:

ԲՈՍՏՈՆ—ԷՋՄԻԱՄԻՆ, 6 VIII 1943 թ.

ԳԵՎՈՐԳ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԶԵՈՐԵՔՅԱՆԻՆ

Հայկական դեմոկրատական լիբերալ պարտիայի սույն թվի հուլիսին դումարված տարեկան ժողովը հայտնում և հավաստում է իր սերն ու նվիրվածությունը Էջմիածնի Գերագույն Խորհրդին, անկեղծորեն իր շնորհակալությունն է հայտնում Ձերդ բարձր սրբազնությանը «Սասունցի Դավիթ» տանկային շարասյան կառուցմանը նախաձեռնելու համար:

Ամբողջ հոգով ողջունելով, մեր ժողովի բոլոր անդամներն իրենց շնորհավորանքներն են հղում Հայկական կառավարությանը և ժողովրդին, պարտավորվում են իրենց օգնությունը ցույց տալ ապահովելու համար Սովետական Հայաստանի հաղթանակը, որի զավակները հերոսաբար կռվում են թշնամի նացիստների դեմ մղվող ճակատամարտերում:

ՊԵՏՐՈՍ ՊԱՐԶՅԱՆ

*) Ստացված բազմաթիվ հեռագրերից սույն համարում ղեկավարում ենք միայն մի քանիսը:

**ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԸՆՏԻՐ ՏԵՂԱԿԱԼ ԳԵՎՈՐԳ ԱՐԲԵՊԻՍԿՈՊՈՍԻՆ**

Հայտնում ենք մեր ամենասրտադին համալիրանքը հայրենական պատե-
րազմի առթիվ՝ ազատութեան և արդարութեան հաստատուն հուսով, և մեր
անձնվիրութեանը Մայր Աթոռին:

Հայոց ռազմանպաստ Միութեանը արդեն իսկ հատկացրել է 47 հազար
դոլլար կարմիր Բանակի բժշկական օգնութեան համար:


Ունենք նաև Հայաստանի ժողովրդի օգնութեան դուրծին հատկացված
դոլլարներ: Ուստի խնդրում ենք հաղորդել, թէ ինչ նյութեր կարող ենք
ուղարկել:

**ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ՂԱԶԱՐՅԱՆ,
ՀԱՅ ՌԱԶՄԱՆՊԱՍՑ ՄԻՈՒԹՅՈՒՆ**

ՆՅՈՒ—ՅՈՐԹԻՑ—ԷՋՄԻԱՄԻՆ, ՀԱՅԱՍՏԱՆ

**ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԸՆՏԻՐ ՏԵՂԱԿԱԼ
Տ. ԳԵՎՈՐԳ ԱՐԲԵՊԻՍԿՈՊՈՍԻՆ**

Հյուսիսային Ամերիկայի Հայոց Թեմական Պատգամավորական Ժո-
ղովը հայտնում է յուր որդիական սերն ու երախտագիտութեանը համայն
Հայոց Մայր Աթոռ Ս. Էջմիած-
նին: Ժողովը խնդրում է Ձեզ
հաղորդել մեր հիացմունքը ՄՏԱ-
ԼԻՆԻՆ, Միութեան իմաստուն
առաջնորդին, որի անդուլ և ար-
թուն ղեկավարութեան շնորհիվ
կարմիր Բանակը քաջութեան
հրաշքներ է ցուցաբերում Հայ-
րենիքի պաշտպանութեան գոր-
ծում: Հայտնել նաև Սովետա-
կան Հայաստանի Ժողկոմսովետի
նախագահին մեր նվիրվածու-
թեանն ու եղբայրական զգաց-
մունքները և մեր պատրաստա-
կամութեանը ցույց տալու ամեն
տեսակ օգնութեան մեր նոր Հա-
յաստանի անվտանգութեանը
ապահովելու համար:



**ԵՂԱՅԱՐԵԱԿԱՆ ՈՂՋՈՒԹՆՆԵՐՈՎ՝
ԴԱՐԵԳԻՆ ԱՐԲԵՊԻՍԿՈՊՈՍ ՀՈՎՍԵՓԵԱՆ,
ԱՌԱՋՆՈՐԴ ՀՅՈՒՍԻՍԱԵՐՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ ԹԵՄԻ**

Ամենայն Հայոց Հայրապետութեան Ազգնորդ Տեղակալ
Տ. Գեվորգ արքեպիսկոպոս Չեորեքչյանը հետեւյալ
հեռագիրն է ուղարկել ՍՍՌԽ Ժողովմանութեի նախագահ
Ի. Վ. ՄՏԱԼԻՆԻՆ

Հյուսիսային Ամերիկայի Հայոց Թեմական Պատգամավորական Ժողովը
հեռագրով խնդրում է մեզ հետեւյալը. «Հաղորդել մեր հիացմունքը
ՄՏԱԼԻՆԻՆ, Միութեան իմաստուն առաջնորդին, որի անգուլ և արթուն
դեկավարութեան շնորհիւ Կարմիր Բանակը քաջութեան հրաշքներ է ցուցա-
բերում Հայրենիքի պաշտպանութեան գործում»:

Կատարելով մեր հոգի կամքը, երջանիկ եմ կրկին միացնելու և իմ
անձնական զբաղմունքները հանդեպ Ձեզ տաճածա անկեղծ նվիրվածու-
թեան, Թանկալին ԻՌՍԻՖ ՎԻՍՍԱՐԻՈՆՈՎԻՉ, և իղձս տեսնելու Ձեր հետա-
դա հաջողութեանները թշնամուն մեր երկրից վտարելու և համայն մարդ-
կութեան համար խաղաղութեան և երջանկութեան բերելու ջանքերում:

Մաղթում եմ Ամենաբարձրյալին, որ պարգևի Ձեզ արեւշատութեան
և Հայրենիքին բարգաւաճում:

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳՆՏԻՐ ՏԵՂԱԿԱԼ ԳԵՎՈՐԳ ԱՐԿԵՊԻՍԿՈՊՈՍ

«ՍԱՍՈՒՆՑԻ ԴԱՎԻԹ» ՏԱՆԿԱՅԻՆ ՇԱՐԱՍՅՈՒՆ ԿԱՌՈՒՑԵԼՈՒ ՀԱՍԱՐ
ՍՍՍՏՎԱԾ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ամենայն Հայոց Հայրապետութեան արդընտիր Տ. Տեղակալի կոչը հայ
Ժողովրդին՝ «Սասունցի Դավիթ» անունով տանկային շարասյուն կառուցե-
լու նպատակով միջոցներ հանգանակելու մասին՝ ջերմ արձագանք է դրել
տեղի և արտասահմանի հավատացյալների լայն շրջաններում: Այդ նպատա-
կով գրեթե բոլոր թեմերում հավատացյալները կատարել են իրենց մու-
ծումները: Արտասահմանի թեմերում հավաքված միջոցների մասին առ այժմ
հետեւյալ տեղեկութեանները կան՝

Նյու-Յորքից—10,000 դոլլար,
Երկրորդ անգամ Նյու-Յորքից —20,000 դոլլար,
Երրորդ անգամ Նյու-Յորքից —10,600 դոլլար,
Թալրիդից—120,000 դոլլար,
Սպահանից —30,000 թուման,
Ֆրեզնոյից (Կալիֆորնիա)—10,000 դոլլար,
Կիպրոսից —3,000 ֆունտ ստերլինգ,
Բեյրութից (Երեստաբողական միութեանից) —100 ֆունտ ստերլինգ,
Ամերիկայից—25,000 դոլլար:

Ներկա ցուցակը, իհարկե, լրիվ չէ: Երկրորդ համարում կապի ինչ-
պես հին, այնպես և նոր ստացված դրամաների մանրամասն ցուցակը:

**ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿԻ ԶՐԱՀԱ-ՏԱՆԿԱՅԻՆ ԶՈՐՔԵՐԻ ՀՐԱՄԱՆԱՏԱՐԻ ՕԳՆԱԿԱՆ
ԳԵՆԵՐԱԼ-ԼԵՅՏԵՆԱՆՏ ԿԱՐՈՐԿՈՎԻ ՀԵՌԱԳԻՐԸ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ
ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ Տ. ՏԵՂԱԿԱԼԻՆ**

«Սասունցի Դավիթ» տանկային շարասյան կառուցման միջոցներ նվիրարբերող հավատացյալների ցանկութունը կատարված է: Սովետական զործարաններում կառուցված է տանկային շարասյունը և հանձնված տանկային N զորամասին, որը մեկնել է Ֆրոնտ և այժմ հաղթական կռիվներ է մղում Ֆաշիստական հորդանների դեմ: Ստորև բերում ենք կարմիր Բանակի զրահ-տանկային զորքերի հրամանատարի օգնական, տանկային զորքերի գեներալ-լեյտենանտ ԿԱՐՈՐԿՈՎԻ հեռագիրը և տանկային շարասյունը՝ տանկային զորամասին հանձնելու որոշ տեսարանների լուսանկարները:

**ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳՈՆՏԻՐ ՏԵՂԱԿԱԼ
ԳԵՎՈՐԳ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԶԵՈՐԵՔԶԱՆԻՆ**

1944 թվի հունվարի 29-ին, հանդիսավոր սլարադաներում, N տանկային զորամասին հանձնվեց «Սասունցի Դավիթ» անվան տանկային շարասյունը, որը կառուցված է Ձեր նախաձեռնությամբ Սովետական Միության և արտասահմանի հայ հոգևորականության և հավատացյալների միջոցներով: Ընդունելով տանկային շարասյունը, սպաները «Սասունցի Դավիթ» տանկերի վրա երգվեցին անխնայարար ջախջախել գերմանական զավթիչներին:

Տանկային շարասյունը շարժվեց դեպի Ֆրոնտ:


**ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿԻ ԶՐԱՀԱ-ՏԱՆԿԱՅԻՆ ԶՈՐՔԵՐԻ
ՀՐԱՄԱՆԱՏԱՐԻ ՕԳՆԱԿԱՆ, ՏԱՆԿԱՅԻՆ ԶՈՐՔԵՐԻ
ԳԵՆԵՐԱԼ-ԼԵՅՏԵՆԱՆՏ՝ ԿԱՐՈՐԿՈՎ:**






Կարելի է բանակի Գլխավոր Հրամանատարության հերկայացուցիչը տանկի անվանագրքը հանձնում է տանկի անձնակազմին:

Յուրաքանչյուր անվանագրքի՝ տանկի այդ յուրաքանչյուր անձնագրի վրա կա հետևյալ մակագրությունը—«Մասունցի Դավիթ N... տանկը կառուցված է հայ հոգեորդականության»-ը հովատաց-
ցալներին միջոցներով:



«Ստսուենցի Դավիթ» տանկային շարասյունը մարտական պատրաստականության վիճակում:

Շուտով թշնամին կզգա նրանց գեղանունների ուժը:



Ոգեշնչված Ստսուենցի Դավիթ մեծ սխրագործություններով, նրա փառապանծ հետնորդները՝ Կարմիր Բանակի սպաներն ու զինվորները վերջին խորտակիչ հարվածը կհասցնեն ֆաշիստական հրոսակներին:


Աստծո օգնությամբ նրանք կհաղթեն:



Հայաստանի փառապանծ զավակներն ուղևորվում են դեպի ռազմաճակատ:
Թող օգնի՝ նրանց Աստված դուրս վճռելու օտարերկրյա զավթիչներին մեր
Մեծ Հայրենիքի սահմաններից:



Հասավ վաղուց սպասած րոպեն... ՍՍՌ Միության, ԱՄՆ-ի, Իրանի, Եգիպտոսի,
Սերբիայի, Լիբանանի, Հարավային Ամերիկայի, Կիպրոսի կղզու և այլ վայրերի
հայ հոգևորականության ու հավատացյալների միջոցներով կառուցված տանկերը
մեկնեցին ռազմաճակատ:

[illegible]

ՈՒՂԵՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ԿՈՎԵՍՏՈՒՐ

Անցած 1943 թվի սեպտեմբերի 27-ին Ամենայն Հայոց Հայրապետութեան ազգային տեղակալ Տ. Գևորգ արքեպիսկոպոս Չեղեղեղյանի հանձնարարութեամբ մեկնեցի զեպի Հյուսիսային Կովկաս՝ ծանոթանալու հայ եկեղեցիներին և նրա համապատասխան համայնքներին հոգևոր գործերին հետ, եկեղեցիներին համար նոր եկեղեցական խորհրդի անդամներ ընտրելու և եկեղեցիներին դրամական հաշիվները ստուգելու ու կարգավորելու նպատակով:

Մեր այդ ճանապարհորդութիւնը տեղեց մոտ մի ամիս: Մեր այցելած ամեն մի քաղաքում, չնայած պատերազմական դժուրութեան հետ կապված որոշ գծավորութիւններին, տեղական քաղաքականների նախադասները ցույց տվին վերին աստիճանի սիրով և վերաբերմունք՝ տրամադրելով հարմար շէնքեր մեր ժողովներին համար:

Այդ ճանապարհորդութեան միջոցին մենք իրազեկ եղանք այն վայրագութիւններին, որ գերմանացիները կատարել են իրենց հնդամայա տիրապետութեան ժամանակ: Վաղիկավկադի շրջակայքից սկսած մինչև Ռոստով կարծես ինչ որ մի խորտակիչ հրաշունչ մըրիկ էր անցել այդ եկեղեցիկ ու հարուստ, արգավանդ երկրի վրայով և իր ավերիչ հետքը թողել ամենուրեք:

Բանուկ երկաթուղիները խանդավրված ու քանդված էին, հոյակապ կամուրջները պայթեցված, վիթխարի կայարաններին շէնքերը հրկիզված ու ավերակ: Չորս կողմը թափված էին վաղոսների ու շուկաքարերի այրված և ջարդ ու փշուր եղած երկաթյա կմախքներ: Հատկապես խիստ հուզիչ էին Բուդյոննի-Պետրովսկի դժուրա-

քաղաք—Ստավրոպոլ երկաթուղիների երկու կողմերում եղած բնակիչ կետերի ավերածութիւնները:

Նախկին զեղեցիկ քաղաքների ներկա տեսքը խիստ սրտաճմլիկ էր: Առանձնապես ծանր տպավորութիւն է դործում ուղևորի վրա Ռոստովի, Արմավիրի, Կրասնոդարի և Պյատիգորսկի տեսքը: Որոշ թաղամասեր գրեթե ավերակի տեսք են ընդունել: Քաղաքները գրեթե բոլոր հյուրանոցները, կրթական բազմահարկ շէնքերը, խոշոր տները պայթեցված, հողին էին հավասարեցված:

Ռոստովի, Կրասնոդարի, Արմավիրի ու Հանքային Ջրերի շքեղ կայարանները անձանաչելի էին դարձել: Ռոստովի՝ էնդելսի անվան լայնարձակ փողոցի երկու կողմերում երեմիի խոյացած երկնամբարձ տների լույս պատերն էին ցցված և շատ տխուր տպավորութիւն էին թողնում անցորդի վրա: Արմավիրի կայարանի սիրուն շէնքերը և նրա մերձակա փողոցների շուրջը եղած բարձրաշէն տները հիմնովին քար ու քանդ էին եղած: Գրեթե նույն վիճակում էր նաև Կրասնոդարը:

Չտեսնված ավերածութիւնների էին ենթարկված նաև եկեղեցիները, որոնց թրվում և հայ եկեղեցիները: Գյորգիլսկի հայոց եկեղեցիաշէն եկեղեցին ևս, որ ճարտարապետական մեծ արժեք ներկայացնող կոթողներից մեկն էր, հիմնահատակ կործանվել էր գերմանացիների կողմից: Նա փլատակների մի կույտ էր ներկայացնում:

Վերին աստիճանի ծանր տպավորութիւն են թողնում ուղևորի վրա տեղացիների պատմածները բնակիչների նկատմամբ գերմանացիների դործած անդթութիւնների մասին:

Մուտք դործելով դյուղերը և քաղաքները՝ նրանք խաղաղ բնակչության մի մասին քաղաքից դուրս էին բերել և անգթաբար կոտորել, չխնայելով ոչ ծերերին և ոչ մանուկներին:

Դրաված քաղաքներում ու դյուղերում նրանք սկսել էին թալանել բնակչությանը:

Տեղացիները պատմում էին, որ դերմանական զինվորները օրը ցերեկով մըտնում էին տները և թալանում:

Դերմանական զինվորներից պակաս անդթություններ չէր կատարել դաշնակցական տիրահաշակ Դրոն: Նա իր «բաջեր»-ով աշխատել էր հետ չմնալ իր տներերից, որոնց կողմից վարձվել է:

Նա ամեն կերպ աշխատել էր հաճոյանալ դերմանական իմպերիալիստներին, որոնց նախորդների թելադրությամբ ու ծրագրով կաղմակերպված էին հարյուրհազարավոր մեր անմեղ թյուրքահայ բնակչության տեղահանությունն ու ջարդերը:

Ամթիվ կորցրած այդ մարզիկ հանդիստ չեն ուղում տալ նույնիսկ առաջին իմպերիալիստական պատերազմի ջարդերից մի կերպ ճողոպրած և Հյուսիսային Կովկաս ասպատանած մեր տաճկահայ եղբայրներին, որոնք զրկարաց ընդունվել և սիրով հյուրընկալվել են Հյուսիսային Կովկասի քաղաքներում և սիրով ապրում են ուսու հյրապրների հետ:

Նրանք աշխատել են թունավորել մեր հայ եղբայրների շրջապատը: Նրանք դժբախտության ու կորստյան նոր դռներ բաց անելով, առաջարկել են տեղացիներին կամավորներ տալ և օգնել իրենց ավանտյուրիստական արշավին:

Ծիծաղաշարժ է, որ հայ ժողովրդի թշնամին՝ դավաճան Դրոն, հանդես է եկել հայ եկեղեցու ու կրոնի «ջերմ պաշտպանի» դերում: Կիսլավոսկի, Պյատիգորսկի, Արմավիր եղած ժամանակ նա կարգադրել է հայ եկեղեցական խորհուրդներին՝ հիմնել բարեգործական ընկերություններ և հան-

դանակություններ սկսել հողուտ «զերի, հիվանդ ու վիրավոր հայ զինվորներին»:

Սակայն շուտով բացվել էր նրա դժմակը: Ինչպես Նդիշեն է ասում՝ «ի վերին երեսս թաղուցանէր զկամս մտացն իւրոց»:

Խաբելով միամիտ հայ հավատացյալներին, նա եկեղեցիներից հարյուր հազարներ է կորզել և այդ միջոցներով իր համար բանկետներ, խրախճանքներ սարքել, աշխատելով փծուն, ճառերով մոլորության մեջ ձգել ու դայթակղեցնել հայ հավատացյալներին:

Նա չի քաշվել անդամ միջամտել հայ եկեղեցու ներքին, հոգևոր դործերին՝ խախտելով հայ եկեղեցու դարավոր ավանդությունները:

Նա Պյատիգորսկ է բերել ավել ուսումնասիրող ուսու և ստիպել Սարգիս անունով մի տիրացուի քահանա ձեռնադրել:

Սակայն այդ խաչադողը շուտով վախշում է դերմանացիների ու Դրոյի հրոսակախմբերի հետ, իր հետ տանելով եկեղեցու թանգարժեք սպասներն ու ըզզեստները: Թալանչիներն իրենց հետ տարել են նաև Կրասնոդարի եկեղեցական խորհրդի անդամներ Ավագյան Զուրաբի ու Թումասյան Իսկուհու միջոցով եկեղեցու խաչի համար հանդանակված ամբողջ արծաթեղենը, շուրջառների համար հավատացյալների նվիրաբերած մետաքս ու թավջե թանկարժեք կտորները և այլն:

Հյուսիսային Կովկասում մեր կատարած ճանապարհորդության ժամանակ, սակայն, մենք մի թարախան և ուրախալի մի բան տեսանք, — այդ տեղացիների շինարար ու ոտեղծադործ ոգին էր, որ բուխել էր հանդես դալ դերմանացիներից ադատադրված շրջաններում: Ամենուրեք նկատվում էր չտեսնված եռուզեռ ու բողուն աշխատանք ավերակները վերականգնելու համար:

Հյուսիսային Կովկասի հավատացյալ համայնքները ևս սկսել են կարգի բերել և բարեգործել իրենց եկեղեցիները: Այսպես, օրինակ, Օրջոնիկիձեի եկեղեցին 67 հազար ռուբլու չքեղ վերանորոգություն

էր կատարել և Ամեն. Հայոց Հայրապետութեան Տ. Տեղակալից իր համար հատուկ քահանա հրավիրել:

Նոր-Նախիջևանի եկեղեցին ևս մեծ դումարի վերանորոգութիւններ էր արել: Նա այժմ պահում է 30 հոգուց բաղկացած երգեցիկ քառամայն խումբ:

Արմավիրի եկեղեցին տասնյակ հաղարներ է ծախսել, դնելով եկեղեցու վերանորոգութեան և եկեղեցու շուրջը ցանկապատելու համար անհրաժեշտ նյութեր:

Այստեղ ևս Ամեն. Հայոց Հայրապետութեան Տ. Տեղակալի կողմից նոր քահանա է նշանակւած:

ՍՈՒՐԵՆ Ծ. ՎԱՐԴԱՊԵՏ



ՍՐԱՇՈՒՄՆԵՐԻ ՕԺՈՒՄԸ ԵՐԵՎԱՆԻ ՔԱՆԱԿԻ
Ս. ՍՐԲԻՍ ԵԿԵՂԵՑՈՒՄ

Կան եկեղեցական որոշ տոներ, որոնց հանդես հայ հավատացյալ ժողովուրդը հատուկ վերաբերմունք ունի և ցանկանում է, որ ավելի հանդիսավորությամբ ու շքով կատարվի այն: Ժողովրդականությունն վայելող այդպիսի տոներից մեկն է ս. Սարգիս զորավարի տոնը, որը մեծ հանդիսավորությամբ տոնվեց այս տարի սուրբ Սարգիս եկեղեցում: Եկեղեցու միաբանությունը իր հավատացյալ աղոթավորներին վաղօրոք հայտարարել էր, որ փետրվարի 5-ին, ս. Սարգիս զորավարի տոնին, կատարվելու է մի շարք սրբապատկերների օծումը: Նշանակված օրը, վաղ առավոտից, եկեղեցին և եկեղեցու բակը լցված էր քաղաքում բնակվող և շրջաններից եկած հայ հավատացյալների խումն բաղմոթյամբ:

Նախքան ս. պատարագը եկեղեցի ժամանեց Ամենայն Հայոց Հայրապետության Ազգերնախարար Տեղակալ դերապատիվ Տ. Գեֆորդ արքեպիսկոպոսը, որի ներկայությունը մեծ խանդավառություն առաջացրեց հավատացյալ բաղմոթյան մեջ:

Տեղ Տեղակալի գլխավորությամբ հանդիսավոր պատարագին մասնակցում էին յոթ քահանաներ:

Պատարագի վերջում Սրբազան Հայրը հանդես եկավ չափազանց ազդու և հուզիչ քարոզով. նա նշեց մեր եկեղեցական հայրերի հայ կուլտուրային, հայ եկեղեցու դործին մատուցած ծառայությունը: Նա հատկապես կանգ առավ եկեղեցական այն հայրերի դործունեության վրա, որոնց պատկերներն օծվելու էին, ինչպիսին են՝ Փրկչի 12 Առաքյալները, ս. Գրիգոր լուսավորիչը, Թարգմանիչները, ս. Սահակն ու ս. Մեսրոպը, ս. Ներսես Շնորհալի Հայրապետը և ս. Սարգիս զորավարը:

Ամսի 5-ի ս. Սարգիս զորավարի տոնը, իր արտակարգ հանդիսավորությամբ, եկեղեցական մեծ տոն հանդիսացավ և հոգեկան մեծ մխիթարություն ու հաճույք պատճառեց ներկա եղող հավատացյալներին:

Եկեղեցու դավիթը բաղմոթյունից դատարկվեց ուշ երեկոյան:

Տաճատ ավ. քահանա Տ. ՎԱՐԴԱՆԹԱՆ

ՌՌԻՍԱՑ ԵԿԵՂԵՑԻ

1943 թվի սեպտեմբեր ամսին Մոսկվայում տեղի է ունեցել Ռուսաց եկեղեցու եպիսկոպոսների ընդհանուր ժողով, որտեղ պատրիարք է ընտրվել ամենապատիվ Սերգիյ արքեպիսկոպոսը: Պատրիարքի ընտրությամբ կապակցությամբ Ամենայն Հայոց Հայրապետության ազգընտիր Տ. Տեղակալը հետևյալ հեռագիրն է ուղարկել մարզնոսի պատրիարքին:—

ՄՈՍԿՎԱ, ՌՌԻՍԱՑ ԱՄԵՆԱՊԱՏԻՎ ՍԵՐԳԻՅ ՊԱՏՐԻԱՐԷՆ

Հանուն Ամենայն Հայոց կաթողիկոսության ի սրտե ողջունում ենք Ձեր՝ Ամենայն Ռուսաց ուղղափառ եկեղեցու պատրիարքական դահ բազմելը:

Մաղթում ենք Ամենաբարձրյալին, որ Նա հովանավորի ուղղափառ եկեղեցին և ուսն մեծ ժողովուրդը:

Ի հետևումն Երուսաղեմից մեր ըստացած հեռագրի՝ հաճեցեք ընդունել նաև Երուսաղեմի Հայ պատրիարքի՝ Մեսրոպ արքեպիսկոպոս Նշանյանի շնորհավորանքները և բարի իղձերն ու բարեմաղթությունները:

ԱՄԵՆԱՑՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳՆՏԻՐ ՏԵՂԱԿԱԼ ԳԵՎՈՐԳ ԱՐԲԵՊԻՍ-
ԿՈՊՈՍ ԶԵՈՐԵՔԶԱՆՆ

Նորընտիր պատրիարքից ստացված է հետևյալ պատասխան-հեռագիրը:

Ի Զ Մ Ի Ա Մ Ի Ն ԱՄԵՆԱՑՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԵՂԱԿԱԼ ԳԵՎՈՐԳ ԱՐԲԵՊԻՍԿՈՊՈՍ ԶԵՈՐԵՔԶԱՆՆ

Ընդունեցեք խորին շնորհակալությունըս պատրիարք ընտրվելու առթիվ Ձեր ողջունի և Ռուսաց ուղղափառ եկեղեցու և ժողովրդի նկատմամբ արտահայտած

Ձեր բարեմաղթությունների առթիվ:
Շնորհակալությունս հաղորդեցեք Երուսաղեմի Հայ պատրիարքին: Թող ապրի և բարկավաճի Հայ ժողովուրդը:

ՍԵՐԳԻՅ ՊԱՏՐԻԱՐԷ

ՌՈՒՍՏԵՑ ԵԿԵՂԵՑՈՒ ԵՊԻՍԿՈՊՈՍՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ ԿՈՅԸ

Մոսկվայում հրատարակվող «Журнал Московской патриархии» 1943 թ. սեպտեմբերի 12-ի №1-ում հրապարակված է ռուսաց եկեղեցու եպիսկոպոսների ընդհանուր ժողովի կողմից համայն աշխարհի քրիստոնյաներին ուղղված կոչը, որով ժողովը դատապարտում է բոլոր նրանց, ովքեր պակասություն ցույց կտան գերմանական ֆաշիզմին: Կոչը հորդորում է համայն աշխարհի քրիստոնյաներին համախմբվել և միահամուռ ուժերով պայքարել ֆաշիզմի դեմ, և վերջնական հաղթանակ տանել ընդհանուր ատեղի թշնամու դեմ: Կոչի մեջ կարդում ենք հետևյալը.

«Քրիստոնյա եղբայրներ ամբողջ աշխարհի: Ներկայումս բոլորս ապրում ենք բացառիկ պատմական մի ժամանակ: Ամբողջ աշխարհը բռնկված է պատերազմի հրդեհով, արյունը հեղեղում է նվրոպայի, Ասիայի, Աֆրիկայի և Ամերիկայի դաշտերը. գերմանացիների կողմից զբաղված բազմաթիվ երկրների բնակչությունն անլուր ծաղրանքի ու լլկանքի է ենթարկվում, ստրկացվում, բնաջինջ արվում. մեր սրբությունները ոչնչացվում են, դարավոր կուլտուրայի արժեքները կործանվում: Ֆաշիզմն ամենուրեք ամբեր ու մահ է սփռում:

Մեր մայր-հայրենիքն իր վրա է ընդունել գերմանական հարձակման հիմնական հարվածը, բայց Աստուծո օգնությամբ, բոլոր ուժերը լարելով, իր հերոսական կարմիր Բանակի փայլուն հաղթանակներով դուրս է մղում իր սահմաններից ուխտադրուժ թշնամուն. և ծանր վերքեր է հասցնում նրան, որն արդեն արյունաքամ է լինում, բայց դեռևս ուժեղ է: Մեր ժողո-

վուրդը, բոլոր ազատասեր ժողովուրդների հետ միասին, պայքարում է հանուն արյունոտ ֆաշիզմի խալառ ոչնչացման ամբողջ աշխարհում, որովհետև մարդկային ոգու խոյանքում չկա ավելի բարձր և ավելի վեհ բան, քան իրեն իսկ պատերազմին մահ պատճառելը:

Ռուսական ուղղափառ եկեղեցին այս պատմական օրերին, ամբողջ երկրի և իր ժողովրդի հետ միասին ապրելով մեր վրա տեղացող ծանր փորձությունները, դիմում է ամբողջ աշխարհի քրիստոնյաներին և կոչ է անում համերաշխ, եղբայրաբար ու սերտորեն միանալ հանուն Քրիստոսի՝ ընդհանուր թշնամու դեմ վերջնական հաղթանակ տանելու համար:

Ուղղափառ եկեղեցին համայն եպիսկոպոսների ժողովի միահամուռ ձայնով, որոնք ներկայումս Մոսկվայում ժողովվել են Պատրիարքի ընտրության համար, կոչ է անում ամբողջ աշխարհի քրիստոնյաներին լարել բոլոր ջանքերը համաշխարհային այս պայքարում, որ մղվում է հանուն՝ Հիսուսի կողմից ուտեստ հարվող քրիստոնեության իղեպանների, հանուն քրիստոնեական եկեղեցիների և հանուն քրիստոնեական եկեղեցիների ազատության, երջանկության և կուլտուրայի:

Ռուսական ուղղափառ եկեղեցին ամենից առաջ դիմում է ձեզ, քրիստոնյա եղբայր-մարտիկներ, որ ներկայումս կռիվ եք մղում մեր բոլոր դաշնակից երկրների բանակներում: Ամբախուռ հավատով, հաստատուն համոզվածությամբ ձեր գործի արդարությանը, պայծառ գիտակցելով, որ այս պատերազմը դադափարական պատերազմ է, սխրագործության պատերազմ

է, պատերազմ է հանուն ճշմարտության, պատերազմ է հանուն դարավոր սրբությունների փրկության, — այդ հավատով, հանուն Տիրոջ, դնացեք վերականգնելու թշնամու գրաված հողերը, ազատագրելու նրա կողմից ստրկացված ժողովուրդներին, դադարեցնելու նրա անօրինակ չարագործությունները, «ասել կապելոյ՝ թէ էլէ՛ք, և որ ի խաւարին իցեն՝ թէ յայրոնեցարուք»:

Ուղղափառ եկեղեցին կոչ է անում և ձեզ, բոլոր դաշնակից երկրների քրիստոնյաներ, որ աշխատում էք ի պաշտպանություն հայրենի հողերի, ընդդէմ ընդհանուր թշնամու, տասնապատկելու ձեր ջանքերը ռազմաճակատին օգնելու համար, հիտլերյան հրոսակախմբերի դեմ լիակատար հաղթանակ տանելու համար:

Նա կոչ է անում բոլոր այն երկրների քրիստոնյաներին, որոնք ժամանակավորապես օկուպացված են Հիտլերի կողմից, բոլոր հնարավոր միջոցներով թշնամու թիկունքում օգնելու ճշմարտ ժողովուրդների փրկության ընդհանուր գործին, լի այն համոզմամբ, որ մոտ է հաղթանակի և Փաշիստական լծից ազատագրվելու ժամը:

Նա խնդրում է բոլոր երկրների քրիստոնյաներին միաձուլվել՝ Տիրոջը մատուցվող ընդհանուր աղոթքում՝ խնդրելով շնորհել շուտափույթ հաղթանակ այս պատմական արյունալի ճակատամարտում, որ մղվում է հանուն քրիստոնեության և համամարդկային իդեալների հաղթանակի ընդդէմ աշխարհին կործանում բերող Ֆաշիզմի:

Նա լիահույս է, որ բոլոր դաշնակից երկրների լարված ջանքերով այս բարենպաստ մոմենտին, երբ մեր հարազատ ուսանական Կարմիր Բանակը հաղթականորեն դուրս մղելով թշնամուն մեր սահմաններից, իր դեմ է դրավել թշնամական խոչոր ուժեր, կատեղծվի, վերջապես, վաղուց սպասվող երկրորդ ճակատը ու կըմոտեցնի հաղթանակը և խաղաղությունը ժողովուրդներին:

Նա հավատում է, որ անօրենություն

ներ և անարդարությունը չեն կարող հաջողությամբ պսակվել, որ Փաշիստների հարձակումը կուղղվի հենց իրենց դեմ, որ, ինչպես Քրիստոս է ասում, «Սուր վերցնողը սրով էլ կընկնի», որ այն արդարացի և սուրբ ցասումը, որով ներկայումս համակված են բոլոր դաշնակից երկրների քրիստոնյաները, կխորտակի բոլոր պատենհները, որ կանգնեցնում է Հիտլերը մեր բոլորին դեմ խաղաղ և հանգիստ կյանքի ճանապարհին, և բուռն թափով կջնջի երկրի երեսից Փաշիզմը ու կվերադարձնի աշխարհին խաղաղություն, ազատություն և երջանկություն:

Եվ թող Տերը օրհնի բոլորիդ, քրիստոնյա եղբայրներ, պաշաքելու հանուն արդար գործի, հանուն ազատության, բարության և արդարության, հանուն հաղթանակի համայն աշխարհում:

ՍԵՐԳԻՅԵ, Միտրոպոլիտ Մոսկվայի և Կոլոմնայի:

ԱԼԵԿՍԻՅԵ, Միտրոպոլիտ Լենինգրադի:

ՆԻԿՈԼԱՅԵ, Միտրոպոլիտ Կիևի և Դալիցիայի:

ԼՈՒԿԱ, Արքեպիսկոպոս Կրասնոյարսկի:

ԻՈՍԿՆ, Արքեպիսկոպոս Սարապուլի:

ԱՆԴՐԵՅԵ, Արքեպիսկոպոս Կազանի:

ԱԼԵԿՍԻՅԵ, Արքեպիսկոպոս Կույբիշևի մարզի:

ՍՏԵՓԱՆ, Արքեպիսկոպոս Ուֆայի:

ՍԵՐԳԻՅԵ, Արքեպիսկոպոս Դոբրու և Արզամասի մարզերի:

ԻՈՍԿՆ, Արքեպիսկոպոս Յարոսլավլի և Ռոստովի:

ԱԼԵԿՍԻՅԵ, Արքեպիսկոպոս Ռյազանի:

ՎԱՍԻԼԻՅԵ, Արքեպիսկոպոս Կալինինի մարզի:

ՎԱՐՑՈԼՈՄԵՅԵ, Արքեպիսկոպոս Նովոսիբիրսկի և Բառնաուլի:

ԳՐԻԳՈՐԻՅԵ, Արքեպիսկոպոս Սարատովի և Ստալինգրադի:

ԱԼԵԿՍԵՆԴՐ, Եպիսկոպոս Մոլոտովի մարզի:

ՊԵՏԻՐՈՍ, Եպիսկոպոս Կուրսկի:

ՎԵՆԵԱՄԻՆ, Եպիսկոպոս Կիրովի մարզի:

ԴԻՄԻՏՐԻՅԵ, Եպիսկոպոս Ուլյանովսկի մարզի:

ԵԼԵՎՅԵՐԻՅԵ, Եպիսկոպոս Ռոստովի:

ԵՐՐ ԵՆ ՀԱՅԵՐՆ ԸՆԴՈՒՆԵԼ ՔՐԻՍՏՈՆԵՈՒԹՅՈՒՆ

Այս հարցին պատասխանելու միակ ապահով աղբյուրը խորենացու պատմութիւնն է, որովհետեւ խորենացին միակ հին պատմագիրն է, որ հետաքրքրւում է ժամանակագրութեամբ, սխտեմատիկորեն և հետեւողաբար տալիս է բոլոր հայ թագավորների և հայրապետների դահակալութեան տարիները՝ նշելով դահակալութեան սկիզբն ու տեւողութիւնը: Եւ խորենացու ժամանակագրական տվյալները, սկսած Տրդատ թագավորից, ճշտվում համապատասխանում են իրականութեանը: Այս պատճառով բանասերները վերոգրյալ հարցին պատասխանելու համար դիմում են խորենացուն:

խորենացին (Բ, 82) ասում է. «Որովհետեւ պատմութիւնն առանց ժամանակագրութեան ստույգ չէ, ուստի մանրամասն հետազոտութեամբ դառնալ, որ Տրդատը թագավորել է Դիոկղետիանոսի երրորդ տարում»: Իսկ Բ, 91 դիմում ասում է. «Մենք գտանք, որ սուրբ Գրիգորը... սուրբ Թադեոս առաքյալի աթոռը բարձրացավ Տրդատի թագավորութեան տասնևյոթերորդ տարում»: Արդ՝ Դիոկղետիանոսը, ստույգ տվյալներով, թագավորել է 284-րդ տարում, ուրեմն ըստ խորենացու, նրա երրորդ տարում, այսինքն 286—7-ին թագավորած պետք է լինի Տրդատը, իսկ նրա տասնևյոթերորդ տարում, այսինքն 302—303-ին, հայրապետական աթոռը նրա տած պետի լինի Գրիգոր Լուսավորիչը, որ և կլինի Հայոց քրիստոնեական դարձի թվականը: Այսպես էլ առհասարակ ընդունված է մեր պատմության մեջ, մի փոքրիկ տարբերությամբ, Հայոց դարձի սկիզբը դնելով 300—303-ին [որովհետեւ բանասերներից ոմանք խորենացու հիշած 17 տարու

փոխարեն ընդունում են Ագաթանգեղոսի վկայութիւնը, թե Գրիգորը խոր-Վիրապում մնաց 13 կամ 15 տարի]: Այս խնդրի վերջին հետազոտողը, Մ. Օրմանյանը, Հայոց դարձը համարում է տեղի ունեցած 303 թվին: Նա նույնիսկ փորձում է որոշել Տրդատի և Հայոց զորքի միջոցառման ամիսն ու օրը՝ 303 թվի հունվարի 6-ը: Ինչպիսիք չինութիւնը նա ավարտված է համարում 303 թվի օգոստոսի 15-ին (Ագաթանգեղոս, էջ 97):

Բայց որքան անբերեւոյթ հիմնավորված ու ճիշտ է այս թվականը, որ մինչև այժմ ընդունված է իբրև անկասկածելի, դիտական հետազոտութիւնները, այնուամենայնիվ, պարզում են, որ նա ճիշտ չէ: Սխալը երևան է դալիս, երբ մենք փորձում ենք այս թվականն ստուգութեան ենթարկել պատմական և ժամանակագրական ըստույգ տվյալներով: Այսպես՝ 303 (կամ 301) թվականն ընդունելով իբրև հայերի դարձի առաջին տարի՝ հայրապետների հաջորդութիւնը հաշվում ենք Լուսավորչից մինչև Ս. Սահակի մահը, որ տեղի ունեցավ 438-ին, դնում ենք, որ մինչև 438 թվականը նստել են հայրապետական աթոռը (ըստ խորենացու) Գր. Լուսավորիչ — 30 տարի, Արիստակես — 7 տ., Վրթանես — 15 տ., Հուսիկ — 6 տ., Փառնեբոս — 4 տ., Ներսես Մեծ — 34 տ., Ծահակ — 4 տ., Զավեն — 4 տ., Ասպուրակես — 5 տ., Ս. Սահակ — 51 տ. — գումարը 160 տարի: Բայց եթե այս 160 տարին ավելացնենք Լուսավորչի դահակալութեան կամ Հայոց դարձի վերոհիշյալ 301—303 թվականի վրա՝ կհասնենք մինչև 461—463 թ., այսինքն Ս. Սահակի մահը իրական ժամանակից հեռանում է 23—26 տարով, որ

անընդունելի է: Իսկ եթե Ս. Սահակի մահվան ստույգ թվականից, այսինքն 438 թվականից հանկնձ այդ 160 տարին՝ այս դեպքում Հայոց դարձի տարին կլինի 278 թվականը: Նույն կերպով հաշվելով թագավորների տարիները, զտնույն ենք, որ ըստ Խորենացու՝ Տրդատը թագավորել է 56 տարի, Խոսրով փոքր—9 տ., Տիրան—11 տ., Արշակ Բ—30 տ., Պապ—7 տ., Վարազդատ—4 տ.¹⁾, Արշակ-Վաղարշակ—8 տ., Խոսրով—5 տ., Վուստ-Շապուհ—21 տ., Խոսրով (երկրորդ անգամ)—1 տ., Շապուհ պարսիկ—4 տ., անիշխանություն—3 տ., Արտաշիր—6 տարի, որով վերջանում է Արշակունյաց հարստությունը 428 ստույգ թվականին: Այս թագավորների դահակալության տարիների գումարը և անիշխանության 3 տարին տալիս են 165 տարի: Եթե Տրդատի թագավորության ենթադրյալ 386 թվականի վրա ավելացնենք այս թիվը, դուրս կգա, որ Արշակունյաց թագավորության բարձումը տեղի է ունեցել 451 թվին, իրականից 23 տարի հետո: Իսկ եթե այս 165 տարին հանենք Արշակունյաց բարձման ստույգ թվականից, այսինքն 428-ից, կստանանք իբրև Տրդատի թագավորության առաջին տարի՝ 263 թվականը, ենթադրյալից 23 տարի առաջ:

Մի երրորդ ստուգություն: Արտաշիր Սասանյանը Արտավանին սպանեց և նրա տեղ ինքը թագավորեց: Ճիշտ հայտնի է այս միջադեպի թվականը—226 թիվը: Արդ՝ Հայոց Խոսրով թագավորը Արտավանի վրեժը լուծելու համար Արտաշիրի դեմ տասը տարի պատերազմներ է մղում, մինչև որ դավաճանարար սպանվում է նա Արտաշիրի ուղարկած Անտիի ձեռքով, ուրեմն 236-ին: Ապա Արտաշիրը, ըստ Խորենացու, մտնում ու նվաճում է Հայաստանը 26 տարի, հետո Շապուհը մի տարի, մինչև Տրդատի գալն ու պարսիկներին Հայաստանից դուրս վանելը: Եթե Տրդատը թագավորած լինի 287-ին, ապա այս

թվականից դուրս գալով Հայաստանի նվաճման 27 տարին և Խոսրովի պատերազմների 10 տարին՝ Արտաշիրի դահակալությունը կհանդիպեր 250 թվին, իսկական ժամանակից 24 տարի հետո (երբ Արտաշիրն արդեն մեռած էր): Իսկ եթե ճիշտ համարենք 226 տարին, Խոսրովի պատերազմների 10 տարին և Հայաստանի նվաճման 27 տարին՝ այս վերջին 37 տարին ավելացնելով 226-ի վրա՝ Տրդատի թագավորության առաջին տարվա համար դարձյալ կստանանք 263 թվականը:

Երեք ստուգություններն էլ մեզ բերում են միևնույն եզրակացության՝ կամ սխալ են Արտաշիրի դահակալության 226 թվականը, Արշակունյաց բարձման 428 թվականը և ս. Սահակի մահվան 438 թվականը, կամ սխալ է Տրդատի թագավորության համար ընդունված 286 թվականը: Քանի որ առաջին երեք թվականներն անտարակուսելի ճիշտ են, մենք հարկադրված ենք ընդունելու, որ ուրեմն սխալ է երկրորդը—286 թվականը՝ իբրև Տրդատի թագավորության առաջին տարի:

Ժամանակագրական այս անստուգությունը նկատել են մի քանի բանասերներ, մասնավորապես Գարագաշյանը և Օրմանյանը, բայց չկարողանալով սխալի բուն հիմքը գտնել՝ աշխատել են մի կերպով պարտակել սխալը, իրենց կողմից նոր սխալներ ավելացնելով և աղավաղելով Խորենացու ժամանակագրությունն ու պատմությունը: Նրանք երկուսն էլ անխախտ պահում են Տրդատի թագավորության առաջին տարին՝ 286 կամ 287 թվականը, Արշակունյաց բարձման 428 թվականը և ս. Սահակի մահվան 438 թվականը: Սըրանով ստացվում է ավելորդ 23 տարի: Եվ նրանք այս ավելորդը վերացնում են՝ խուզելով այս կամ այն թագավորի կամ կաթողիկոսի տարիների թիվը: Այսպես՝ Գարագաշյանը (Քնն. պատմ., մասն Գ, էջ 4) Տրդատին տալիս է 49 տարվա թագա-

1) Խորենացու պատմության իմ թարգմանության հավելվածում (էջ 365) տպագրական վրեժ պակով բաց է թողնված Վարազդատ անունը և նրա ժամյա թագավորությունը:

վորութիւն, փոխանակ խորենացու 56 տարւան, Արշակ երկրորդին տալիս է 15 տարի, փոխանակ խորենացու 30 տարւան: Այս փոփոխութիւնները նա անում է կամայականորեն, ծայրը ծայրին հասցնելու նպատակով: Նույն կերպ է վարվում և Օրմանյանը կաթողիկոսների նկատմամբ: Նա ասում է (Ազգապատում, հատ. Ա, էջ 116). «Վասն զի խորենացիին հաշիվը թե՛ կաթողիկոսներու, թե՛ թագավորներու և թե՛ կայսրներու տարիներուն մեջ հաստատապէս և հավասարապէս 24 տարիներու հավիլվածակա՞ն սխալ մը ունի, այդ 24 տարիները պետք կըլլայ համեմատական զեղչերով ուղղել»: Այսպես էլ նա ուղղում է Վրթանեսի կաթողիկոսութեան տարիները, տալով նրան 8 տարի, փոխանակ խորենացու 15-ի (անդ, էջ 126): Ներսես Մեծին տալիս է 20 տարի, փոխանակ խորենացու 34-ի (անդ, էջ 220) և այլն: Նրա բերած պատճառաբանութիւնները ևս համոզիչ չեն և հակասում են պատմութեան:

Տեսնում ենք, որ այս «ուղղումները» իրապես նորանոր սխալներ են առաջացնում և ոչ թե ուղղում սխալը: Իսկ այս սխալը, ինչպես ասացի, գտնվում է Տրդատի թագավորութեան տարեթիվ՝ 286 (կամ 287) թվականի մեջ: Այս թվականը գտել են բանասերները: Խորենացին սրանում մեղք չունի. նա ասել է միայն, թե Տրդատը թագավորել է Դիոկղետիանոսի երրորդ տարում. բայց թե ո՞ր թվականին է Դիոկղետիանոսը թագավորել, նա չի ասում: Խորենացու ժամանակ, և դեռ շատ հետո, դեռ սովորութիւն չկար փրկչական տարեթիվը գործածելու. մի որևէ տարի նըշանակելու համար գործ էին ածում այսինչ հայտնի թագավորի կամ կայսրի թագավորութեան այս-ինչ տարին: Այսպես էլ վարվել է և Խորենացին: Իմանալու համար, թե ըստ Խորենացու փրկչական ո՞ր թվին է թագավորել Դիոկղետիանոսը, պետք է օգտվենք նույն Խորենացու տրված չափերից՝ հիմնված Տրդատի թագավորութեան առաջին տարվա թվականի վրա, որ

ստացվեց երեք ստուգութիւններից, այսինքն՝ 263 թվականը, որից և եղրակացնում ենք, թե ըստ Խորենացու՝ Դիոկղետիանոսը թագավորել է 261 թվականին, իրական ժամանակից 23 տարի առաջ: Այս թվականը մեզ համար սխալ է, բայց ուղիղ է Խորենացու համար, որովհետև սրա վրա է հիմնվում նրա ժամանակագրութիւնը:

Բարեբախտաբար Դիոկղետիանոսի թագավորութեան առաջին տարին 261 թվականով նշանակված ենք գտնում և մի ուրիշ պատմական վավերագրի մեջ: Սերեոսի պատմութեան մեջ (էլ. ԽԳ, էջ 132) հիշվում է, թե Հայոց եկեղեցական ժողովը Կոստանդ կայսրին ուղարկվելիք թղթում գրել է. «Յամին երեքասաներորդի կենարարին և փրկչին մերոյ Յիսուսի Գրիստոսի թագաւորէ Դիոկղետիանոս»: Սերեոսի նախկին հրատարակչներն այս «տասներեքերորդ» տարին չկարողանալով բացատրել՝ դեն են ձգել և իրենց կողմից դրել ճիշտ թվականը—յամի երկերիւրութեան և չորրորդի (= 284-րդ տարում): Սակայն բնագրի տասներեքերորդ տարին ճիշտ է հունաց թվականով: Արևմուտքում իբրեւ տարեթիվ երկար ժամանակ գործածական էր Հռոմի շինութեան թվականը, որը ըսկսվում է 757 թվին Ն. Ք. Մեր թվականի 247 թվին, Փիլիպպոս կայսեր ժամանակ, լրացավ Հռոմի շինութեան տարեթիվ (ab urbe condita) առաջին հազարամյակը և 248 փրկչական թվականով սկսվեց երկրորդ հազարամյակը, որը գրում էին ո՛չ թե 1001, 1002..., այլ կարճութեան համար 1, 2... և սա կոչվեց հունաց թվական. ահա այս հունաց թվականի 13-րդ տարին է, որ համապատասխանում է փրկչական 261 թվականին. ուրեմն՝ յոթներորդ դարի ճառասնական թվականներին էլ Հայոց եկեղեցական ժողովը Դիոկղետիանոսի թագավորութեան առաջին տարին դնում է Գրիստոսի 261 թվականին, ինչպես Խորենացին: Սրանից հետևում է, որ Հայաստանում երկար ժամանակ գործածութեան

մեջ է եղել մի ժամանակադրական աղյուսակ, որի մեջ Դիոկղեսիանոսի թագավորության տարին նշանակված է եղել իրականից 23 տարի առաջ:

Բայց Պորենացու պատմության ուշագրավ քննությունը ցույց է տալիս, որ միայն Դիոկղեսիանոսի թագավորության մեջ չէ պատահում այս ժամանակադրական սխալը, այլ նաև ուրիշ Հռոմ-Բյուզանդական կայսրների տարեթվերի մեջ: Դեռ Գուտշմիդը յուր «Պորենացու Հայոց պատմության արժանահավատության մասին» հատակից քննության մեջ նկատել էր. «Պորենացին Հռոմեական կայսրների պատմությանը բոլորովին անպետ է և նրանց բոլորի տարիները մոտ 18 տարի վեր է բարձրացնում» (առանձին արտատպություն, էջ 7). պետք էր ասել՝ «18-ից մինչև 24 տարի վեր է բարձրացնում»: Օրմանյանն էլ, ինչպես տեսանք, նկատում է, որ Պորենացու մոտ թե՛ կաթոլիկոսների, թե՛ թագավորների և թե՛ կայսրների տարիները հաստատապես և հավասարապես 24 տարվա հավելվածական սխալ ունին (պետք էր ասել միայն կայսրների, որովհետև կաթոլիկոսների և հայոց թագավորների տարիները մեջ Պորենացու մոտ սխալներ չկան): Բերենք Պորենացու պատմությունից մի քանի օրինակ, որոնցից երևում է, որ Պորենացու պատմության մեջ կայսրների ժամանակներն արդարև իրականից 18-24 տարի առաջ են նշանակված:

Պորենացին պատմում է (Բ. 71), թե երբ Պոսրով թագավորը (Տրդատի հայրը) լսեց, որ Արտաշիր Մասանյանն սպանել է Արտավանին և ինքը թագավորել, իսկույն դիմեց հռոմայեցոց Փիլիպպոս կայսրին՝ նրանից օգնություն խնդրելով, որպեսզի հարձակվի Արտաշիրի վրա:

Թվանշանների վեր ածենք այս տեղեկությունը: Արտաշիրը Արտավանին սպանեց և ինքը թագավորեց 226 թվին, իսկ Փիլիպպոսը գահակալեց 245 թվին (երբ Արտաշիրն արդեն մեռած էր): Որպեսզի Փիլիպպոս կայսրը ժամանակակից դառնա Արտաշիրին, պետք է նրա թագավորու-

թյան տարեթիվը գոնե 20 տարով վեր բարձրացնել:

Պորենացին պատմում է (Գ, 5), թե վրթանես կաթոլիկոսը թուղթ գրեց Կոստանդ կայսրին՝ խնդրելով օգնել զորքով Տրդատի փոխարեն նրա Պոսրով որդուն թագավորեցնելու համար:

Թվականների վեր ածենք: Վրթանեսը կաթոլիկոսություն է արել 315-333 թվականներում, իսկ Կոստանդը կայսր է նստել նրա մահից հետո, 337-ին: Որպեսզի Կոստանդը ժամանակակից դառնա Վրթանեսին՝ պետք է նրա թագավորության տարեթիվը բարձրացնել 18-20 տարով: Սա պարզ երևում է մանավանդ Պորենացու պատմության մի այլ հատվածից (Գ, 8), որտեղ ասում է, թե Պոսրով (Փոքր) թագավորեց Կոստանդի թագավորության ութերորդ տարում: Պոսրովը, ըստ Պորենացու ժամանակադրության, թագավորել է 319 թվին. իսկ Կոստանդի թագավորության ութերորդ տարին լինում է 344 թվականը: Որպեսզի այս երկու տարիները իրար զուգընթանան՝ հարկավոր է Կոստանդի թագավորության տարեթիվը 25 տարով վեր բարձրացնել:

Ըստ Պորենացու տեղեկության (Բ, 12, 13), Տիրան թագավորը ժամանակակից է Հուլիանոս կայսրին, նրա հետ զործեր է ունեցել:

Թվականների վեր ածելով տեսնում ենք, որ Տիրանը թագավորել է, ըստ Պորենացու տեղեկության, 328-333 թվականներին, իսկ Հուլիանոսը կայսր է նստել 361-ին: Որպեսզի Տիրանը և Հուլիանոսը իրար ժամանակակից դառնան՝ պետք է վերջինիս ժամանակը վեր բարձրացնել մոտ 30 տարով:

Նույն երևույթը նկատվում է ամեն անգամ Պորենացու պատմության մեջ, երբ Հռոմ-Բյուզանդական կայսրները զործ են ունենում Հայոց թագավորների հետ. կայսրների տարիները իսկական ժամանակից միշտ վեր են բարձրացրած լինում 18-30 տարով: Բերել այստեղ բոլոր օրինակները—ավելորդ է: Բերվածները բավակա-

նաչափ ապացուցանում են այս: Նրանք ապացուցանում են նաև, որ Խորենացին «Ի իսկզբնառարկայի երրորդ տարու» տակ հասկանում է ո՛չ թե 284 թվականը, ինչպես ընդունել են բանասերները և նրանից սխալ հետևանքի հասել, այլ 263 թվականը:

Այս անկասկածելի հիմքն ունենալով, մենք հասնում ենք հետևյալ ճիշտ եզրա-

կացություններին.— 1) ըստ Խորենացու Տրդատը թագավորել է 263 թվին. 2) Լուսավորիչը հայրապետական աթոռ է նստել Տրդատի թագավորության 17-րդ տարում, այսինքն՝ 279-ին: Ուրեմն՝ քրիստոնեությունը, Մ. Խորենացու ժամանակագրական տվյալների հաշվով, Հայաստանում իբրև պետական կրոն ընդունվել է փրկչական թվականի 279 տարում:

Ակադեմիկոս ՍՏ. ՄԱՆԻՍՏԱՆ.

ՀԱՅ ՏԱՌԵՐԻ ԳՅՈՒՑԻ ԱՏՈՒԹՅ ԹՎԱԿԱՆԸ

Հայերեն տառերի դյուտի թվականը համարվել է սովորաբար 404 թ.։ Այս տեսակետի դեմ մի ցնցող հոգոված հրատարակեց Գ.Տ.— Մկրտչյանը «Արարատ» ամսագրում, 1912 թ., էջ 499-514, որով հերքում է այդ թվականը և հայերեն տառերի դյուտը դնում է ութից մինչև տասներկու տարի ավելի ուշ, 412-16 թվերին։ Նա հիմնվում է Եղեհիայի ասորոց եպիսկոպոս Ռաբուլասի վրա։ Այս նշանավոր մարդը գահակալեց 412 թվին։ Եթե Մեսրոպը Եղեհիա դնալով ընդունվեց Ռաբուլաս եպիսկոպոսից, այդ ընդունելութունը կամ հանդիպումը էջը կարող է 412 թվից առաջ լինել, բայց այդ կարող էր լինել նաև 412-ից հետո («Արարատ», էջ 509)։ «Այդ թվականից առաջ, մեր ունեցած տեղեկությունների հիման վրա, անհնար է դնել մեսրոպյան տառերի դյուտը։ Թերևս այդ դյուտը ստորական հետևյալ տարումն է (412 սկստ.—413 սկստ.), բայց հավանորեն ոչ դրանից ավելի ուշ» («Արարատ», էջ 513)։ Չորս տարի էլ հաշվում է Մամոսատ դնալու, Հռոմանոսին պնակիտը պատրաստել տալու և Առակաց գիրքը թարգմանելու համար և վերջապես 416-ին վերադարձնում է Հայաստան։

Այսպիսով, ըստ Գալուստ Տեր-Մկրտչյանի, բուն մեսրոպյան գրերի դյուտի թվականն է 412-416 քառամյակը («Արարատ», էջ 513)։ Այս 416 թվին է, որ Մեսրոպը վերադարձավ Հայաստան։

Հակառակ Գ. Տեր-Մկրտչյանի ենթադրության, ես պահում եմ 404 թիվը հետևյալ պատճառաբանություններով։ Կորյունի մեջ Բաբիլոնի ամուսնը հետոնի հետ վերված է։ Կորյունը՝ չնայած որ մի քանի անգամ առիթ է ունենում հիշելու այդ ե-

պիսկոպոսին, բայց միայն մի անգամ է տալիս նրա անունը. «Ընդդեմ լինէր սուրբ եպիսկոպոսացն (որոց առաջնոյն Բաբիլաս անուն և երկրորդին Ակակիոս), հանդերձ կղերականօքն և իշխանօքն քաղաքին պատահեալ» (Կոր. էջ 19)։ Մյուս դեպքերում տեսե՛ք՝ ինչ ձևերով է հիշում. «Նւ ապա հրաժարեալ յեպիսկոպոսացն սրբոց» «...և հրաժարեալ ի նոցանէ հանդերձ ամենայն իւրովքն, բերէր առ եպիսկոպոսն Ասորոց։ Որ յորոց նախընկալն եղև, առաջի արկեալ նոցա զնշանադիրսն աստուածատուր. վասն որոյ բազում իսկ զովութիւնք յեպիսկոպոսաց սրբոց և յամենայն եկեղեցեաց բարձրանային»։ Այս բոլոր խոստովակ ձևերը հետաքրքիր են, մանավանդ երրորդը, «նա որոնցից որ առաջին անգամ ընդունվեց, նրանց ներկայացրեց գրերը»։

Մենք արդեն ցույց ենք տվել, որ Կորյունի մեջ հետին հավելված է Մելիտինի Ակակիոս եպիսկոպոսի անվանումը։ Այս խոստովակ և տարօրինակ հիշատակություններն էլ ցույց են տալիս, որ Կորյունը նույն եպիսկոպոսների անունը չըզդիտեր։ Եվ եթե առաջին հիշատակության մեջ էլ անկյունավոր փակագծի մեջ առնված մասը հանենք, նախադասությունը ամենեկին չափաի կաղար։

Իր ասածը հաստատելու համար Գ.Տ.— Մկրտչյանը մի հնարագետ միջոցի էլ է դիմում։ Կորյունը Դանիելյան նշանադրերը բերված է համարում Վռամշապուհի հիմնգերդը տարին, փորձարկության համար տալիս է երկու տարի, հետո Մեսրոպը մեկնում է Միջագետք Վռամշապուհի դարձյալ հիմնգերդը տարում և վերադառնում է Վռամշապուհի վեցերորդ տարում։ Գալուստ Տ.—Մկրտչյանն ասում է, որ այս

վեցերորդ ընթերցվածը շատ հին է և դժվար է փոփոխել կամ ջնջել: Այնուամենայնիվ ինքը փոխում է և վեցերորդը դարձնում է ԺԶ (16): Սրա համար էլ հիշում է մի ճառընտիր, ուր այս վեցերորդ բառից առաջ բաց տեղ է թողված, պակասը լրացնելու համար («Արարատ», էջ 511): Ենթադրենք, թե Կորյունի բնագրում բոլոր թվերը թվանշանով էին գրված և ոչ թե բառերով, որովհետև հակառակ պարագային կարելի չպիտի լիներ այնպիսի հեռավոր վեցերորդը վեշտասաներորդ դարձնել, ինչպես անում է Զ-ԺԶ: Բայց ի՞նչ է անում Մեսրոպը Միջագետքում ամբողջ ինն տարի: Գ. Տ.—Մկրտչյանը Դանիելյան գրերի Հայաստան բերելը դնում է 405 թվին, Վառձապուհի հիմնադրող տարին: Երկու տարի փորձ է կատարվում, դառնում է 407՝ Վառձապուհի յոթներորդ տարին, երբ Մեսրոպը մեկնում է Միջագետք: Վերադառնում է Վառձապուհի ԺԶ = 16-րդ տարին, այն է 416 թվին: 407-ից մինչև 416 ունենք ինն տարի, որից չորսը (412—416) դնում է Եդեսիայի և Սամոսատի աշխատանքների համար, իսկ մնացյալ

հինգ տարիների վրայից լուծթյամբ է անցնում:

Ահա թե ինչպիսի՜ լարերինթոսի մեջ է գցում Ռաբուլասի 412-ը. ահա թե ինչպե՞ս է կործանվում և այդ հիմքի վրա մեծ խնամքով կառուցված շենքը:

Մեր մի հոգվածում, որը տպագրվել է Արմֆանի 1941 թվի տեղեկագրում (էջ 169-170), ցույց ենք տվել, որ Կորյունի երդ-ը պետք է կարդալ ոչ թե հիմնադրող, այլ ինչպես գրված է՝ երրորդ: Երկու տարվա փորձից հետո կունենանք հիմնադրող, ինչպես որ գրված է: Մեսրոպը մեկնում է Վառձապուհի հիմնադրող տարում և վերադառնում է վեցերորդ տարում: Ուրեմն Միջագետքում մնում է մեկ տարի. և այսքանը բոլորովին բավական է մի գրադարան այցելելու, մի այբուբեն հնարելու, մի պնակիտ պատրաստելու և Առակաց գրքի նման մի փոքրիկ գիրք (որն ունի ընդամենը 60 էջ ութածալ) չորս հոգով (Մեսրոպ, Հովհան, Հովսեփ, Հռոփանոս) հայերենի թագմանելու և գրի առնելու համար:

Ակադեմիկոս Հ. ԱՃԱՌՑԱՆ

ՀՈՎՀԱՆՆԵՍ ՎԱՐԴԱՊԵՏ ՄՐՔՈՒԶ

ՀՈՒՅՈՐ, ԱՍՏՎԱԾԱԲԱՆ ԵՎ ՆԿԱՐԻՋ 17-ՐԴ ԴԱՐՈՒՍ.

Հայ իրականության մեջ նշանակելի անձնավորություններ են եղել, այն ևս ո՛չ շատ հեռու անցյալում, որոնց մասին մենք, մեր օրերում, գրեթե տեղեկություն չունենք, և նրանք անցնում են մոռացության գիրկը. այդպիսիներից մեկն է Նոր Զուղայում 17-րդ դարում ապրող և գործող հոգևոր, աստվածաբան և նկարիչ Հովհաննես վ. Մրքուզը: Խաչատուր Զուղայեցին իր «Պատմութիւն Պարսից» աշխատության մեջ այս վարդապետին ուսուցիչ կոչումներ է տալիս՝ անվանելով «տիեզերալոյս», «թագաւորաց աստուածաբան» ու նրան ներկայացնում Արխատոսելին և Ոսկեբերանին համահավասար: Որպեսզի այս մարդու միջավայրին ծանոթանանք, թե ինչպես կարող էր նա աճել և զարգանալ իրանի մի գյուղաքաղաքում, մենք թուղիկ կերպով խոսենք այստեղ Նոր Զուղայի կուլտուր-տնտեսական կյանքի մասին, նախքան Մրքուզի հանդես գալը:

Շահ-Աբբաս Ա-ի կողմից Զուղայի և չլը-Ղակա գավառների բնակչությանը բռնի կերպով տեղափոխումը դեպի Իրանի խորքերը (1605 թ.) հետագայում տալիս է նաև իր դրական հետևանքները: Իրանի մայրաքաղաք Սպահանի մոտ, ինչպես հայտնի է, թագավորի հրամանով ջուղայեցի գաղթականները հիմնում են մի գյուղաքաղաք, կոչելով Նոր-Զուղա: Ահա այս քաղաքը կարճ ժամանակում այնպես է առաջադիմում, որ դառնում է իր ժամանակի փարթամ հայ դպրութեններից մեկը: Զուղայեցիք իրենց Նոր հայրենիքում ավելի են զարգացնում իրենց առևտրական ընդունակությունները՝ ունենալով Շահ-Աբբասի անձնական հովանավորությունն

ու. աջակցությունը: Նոր Զուղան դառնում է առևտրական կենտրոն, վաճառականներն իրենց ապրանքներով անցնում են Կասպիական, հասնում Աստրախան, հասնում ուստաց մայրաքաղաքը ու այնտեղից մինչև Արխանդեսկ: Սակայն այդ վաճառականների համար նեղ է թվում Ռուսաստանը, նրանք ծով ու ցամաքով անցնում են Արևմտյան Եվրոպայի վաճառաչ քաղաքները և տեղի չուկաներում իրենց գործարքները կատարելով ուռճացած ու հարուստ վերադառնում են տուն:

Տնտեսական կենտրոն հանդիսացող Նոր Զուղան 17-րդ դարի 30-ական թվականներին Արևելյան հայ աղգաբնակչության համար հետզհետե կերպարանափոխվում է իբրև մի կուլտուրական օջախ ու այդ օջախի հիմնադիրը դառնում է քաղաքի հոգևոր առաջնորդ Խաչատուր վ. Կեսարացին: Անցյալում աշակերտած Գրիգոր Կեսարացուն և Մովսես կաթողիկոսին, Եվրոպա չընթացած՝ Խաչատուր Կեսարացին եղել է ուսման և կրթության նախանձախնդիր մի անձնավորություն: Նա հիմնում է դպրոց, գրադարան, տպարան (առաջինը ամբողջ իրանում), հավաքում է Հայաստանից և այլ տեղերից բերված ձեռագիր գրքեր և ստիպում է իր աշակերտներին և վանքի միաբաններին ընթերցանությունը պարտել: Համատարած խափարի մեջ նկատվում է մտավոր վերածնության մի նշույլ և տպիկար ու տպետ հոգևորականների կողքին երևում է արդեն մի գործունեյա և լուսաւ միտ մարդ:

Խաչատուր Կեսարացու մահից (1646) հինգ տարի անց Նոր Զուղայի առաջնորդության պաշտոնով հրավիրվում է նրա աշակերտ Դավիթ վարդապետը, որը Փիլի-

պոս կաթողիկոսի պատվերով գնում է Երուսաղեմ, նրանից օծվում եպիսկոպոս և 1650-ին վերադառնալով գրավում իր աթոռը: Այս անձնավորութունը իր նախորդից ոչ պակաս ջանասիրությամբ իր 31 տարվա պաշտոնավարության ընթացքում արդյունավոր գործունեություն է ցույց տալիս: Նա հիմնովին վերաշինում է Նոր Զուղայի Ամենափրկիչ եկեղեցին, մեծացնում և ընդարձակում է վանականների բնակելի տունը, զարդարելով «գեղեցիկ և պատշաճավոր շինվածքներով»: Մակայն ոչ պակաս նշելի է այն, որ Դավիթ եպիսկոպոսը մեծ զարկ է տվել իր միաբանների մտավոր առաջադիմության՝ դասախոսելով վանքի դպրոցում կամ, ինչպես այն ժամանակ են կոչել, «Համալսարանում»: Թե ինչ առարկաներ են ավանդել այդ դպրոցում, այդ մասին հիշատակված կա Նոր Զուղայում 1686-ին գրված մի ձեռագրի հիշատակարանում:

«Եւ ժողովեաց (Դավիթ) բազում աշակերտս և ձեռնասուն արարեալ զնոսա և լուսաւորեաց հոգւով և զարդարեաց գիտությամբ և զանազան ուսմամբ, այսինքն հոգեւորապէս սաղմոսիւք, քաղցրեղանակ շարականիւք, երաժշտական ձայնաւորօք, տաղիւք, մեղեդիւք, գանձիւք, և այլ մանրամաս կացութօք, համարողական թուականիւք, քերթողական քերականիւք, փիլիսոփայական հանճարիւք և արտաքին ուսմամբք բնագանցական աստուածաբանությամբ Աստվածաշունչ գրոց»:

«Նոր Զուղայի պատմութեան» հեղինակը՝ Տեր-Հովնանյանը, (որից մենք քաղել ենք վերահիշյալ ցիտատը), իր աշխատութեան Բ. հատորում (էջ 29) միառմի հիշում է Դավիթ եպիսկոպոսի 29 աշակերտների անունները, որոնք հետագայում դարձել են կաթողիկոս, եպիսկոպոսներ, վարդապետներ և քահանաներ: Ահա այդ աշակերտների թվում եղել է և մեր այս հոգևածի նյութը կազմող Հովհաննես վարդապետ Մրջուլը:

Այժմ Խաչատուր Զուղայեցու «Պատմ

մութիւն Պարսից» աշխատութիւնից օգտվելով կազմենք Հովհաննես Մրջուլի կյանքի և գործերի ամփոփ նկարագիրը՝ մեջընդմեջ խոսքը տալով հեղինակին:

«Ծնաւ սա ի Նոր Զուղայ ի բարեպաշտ ծնողաց. մինչ տակաւին երեխայ էր, ընկալաւ ի բարի սնունդ ի յանձն իւր հասակն իւր և եմուտ ի պատանեկութիւն, հրաժարեալ ի բազմաղբօս կենցաղոյս եկն ի վանս և ուխտեաց ապրել կրօնաւորութեամբ: Ու ուսաւ զհին և զնոր կտակարանս աստուածայինս առաջի տեսն Դաւթի առաջնորդի վանացս. նաև ուսաւ զհամայն գիտութիւնս իմաստասիրական հանճարոց»:

Պատմիչի ասելով Հովհաննեսը եղել է վերին աստիճանի ընթերցասեր, գիշեր ցերեկ շարունակ կարդացել է և վարել շատ պարզ կյանք: Ե՞րբ է նա վարդապետական աստիճան ստացել, այդ մասին հիշատակութեան չկա, բայց նա վանքում և վանքից դուրս հիմնովին սովորել է պարսկերեն, ապա «գնացեալ յԱրարիս՝ ուսանի զգիր և զլեզու Արաբացւոց, որով ևս առաւել յոյժ գերազանցաբար ճոխացաւ»:

Ըստ երևույթին Հովհաննես Մրջուլը վանական դպրոցում առանձնապես սիրել է բեմասացութեան, քարոզելու հետտորական արվեստը: Նա, ջերմ նախանձախնդիր քրիստոնեություն և «հայոց եկեղեցու ճշմարիտ դավանութեան», քաջի ճարտար խոսքից ու քարոզությունից, վեճի է բռնվել պարսից իմաստունների, բարձրաստիճան կրօնավորների, իշխանների, նույնիսկ Սուլեյման և Հուսեյն թագավորների հետ, դեմ առ դեմ խոսելով և ամեն անգամ սոփեստաբար հաղթանակւ չահելով: «Պարսից պատմութեան» հեղինակը ամեն մանրամասնութեամբ առաջ է բերել չահերի և Մրջուլի վիճարանությունների նկարագիրը ընդամասնողությունների ձևով: Քննութեան են առնվել կրօնական-աստվածաբանական, փիլիսոփայական մի շարք խնդիրներ, որոնց ինչ կերպ լուսա-

բանությունից երևում է, որ մեր «մեծի-մասո» վարդապետը, բացի այն, որ քաջ տեղյակ է եղել Աստվածաշնչին, Ղուրա-նին, այլև ծանոթ է եղել Արիստոտելին, Պլուտարխոսին և այլ փիլիսոփաների:

Խաչատուր Զուղայեցու վկայությամբ, որ ամենայն օր «հոլլք և բազմութիւնք Պարսից իմաստնոց» գնացել են Հայոց վանքը սփանչելի և տիեզերալույս վարդապետի մոտ հավատի խնդիրների մասին հակաճառելու, հանդիպել են «անդրդվելի վե-մի» և խուսափել են շարունակել վիճարա-նությունը:

«Արդ այսպէս երկնածորան շնորհիւ և բազմազեղ իմաստութեամբ ստնանէր և պատրաստեալ յաղթէր զհամայն խումբս խոհական իմաստասիրաց և զհազարիս իշխանաց Պարսից, որ և ամենայն իմաս-տասէրք Պարսից գային առ նա զնմանէ դաս առնուին, զի էր յոյժ հմուտ բարբառաց և Արաբացւոց և կարի տեղեակ գրոց նո-ցա»:

Բանավոր կերպով արտահայտած իր ճառերն ու քարոզները բավարար չհամարե-լով Հովհաննես Մրքուզը հեղինակել է դը-րավոր աշխատութիւններ՝ թե հայերեն և թե պարսկերեն, արաբերեն լեզուներով, երբեմն և երկլեզու, մի գրքի մեջ հայերե-նը և պարսկերենը կողքիկողքի:

Որքան մեզ հայտնի է, այդ աշխատու-թյուններից լույս են տեսել՝

ա) «Կրթութիւն հաւատոյ», տպագր. Նոր-Ջուղա, 1688, ապա բ. տպագրու-թյամբ Կ. Պոլսում, 1713-ին:

բ) «Գիրք ժողովածոյ ընդդէմ երկա-րնական», տեղը մեզ անհայտ:

Այլելի բազմաթիւ են հեղինակի ան-տիպ գործերը, որ պատմիչի վկայությամբ իր ժամանակին (18-րդ դար) եղել են Նոր Զուղայում: Այդ աշխատութիւնները ա-նուն անուն հիշատակում է Խաչատուր Զուղայեցին: «Եւ բազում մարդարտահիւս և զիմաստալից գրեանս արար Պարսից և Արաբացւոց լեզուաւք և գրով վասն

բացայայտութեան ճշմարտի հաւատոյ մե-րոյ...» որք են այսօրիկ:

«Նախ՝ գրեալ շարագրեաց զհարց պա-տասխանին, զոր արքան Սլեման եղև ըստ ընական բանականութեան և խելաց հաւա-նութեան: Երկրորդ՝ գրեաց զգիրք մի վասն աստուածութեան Քրիստոսի առ ար-քայն Հոսեն, զոր հրամայեաց գրել: Եր-րորդ՝ շարահիւսեալ վերագրեաց վասն հաղորդութեան մարմնոյ...» և այլն: Այսպես թվում է պատմիչը մինչև ութե-րորդը՝ բոլորն էլ նման աստվածաբանա-կան բովանդակությամբ և պարսկերեն լեզվով, «որք և մինչև ցայսօր ընթերցեալ լինին ի պարսից իմաստասիրաց»:

Խաչատուր Զուղայեցին ապա թվում է և «գերահռչակ» Հովհաննես վարդապետի հայ լեզվով գրած աշխատութիւնները՝

ա) Համառոտ քերականութիւն և տրա-մարանութիւն.

բ) Համառոտ աստուածաբանութիւն.

գ) Սրբազնագործութիւն.

դ) Մեկնութիւն Երզոց երգոյն Սողո-մոնի.

ե) Մեկնութիւն Սաղմոսաց Դաւթի.

զ) Աղօթագիրք:

Անշուշտ լրիւ չէ Մրքուզի հայերեն երկասիրութիւնների այս ցանկը, որովհե-տե նրա մեջ չեն հիշված հեղինակի այն տպագրած աշխատութիւնները, որոնց մա-սին դրեցինք վերևը:

Հովհաննես վարդապետի հռչակը տա-րածվում է և հեռավոր վայրեր: Նրա բարձր արժանիքները և բեղմնավոր գոր-ծունեութիւնը ի նկատի առնելով իջմիած-նից նրան կանչում են եպիսկոպոս ձեռնա-դրելու, սակայն նա «խելով կամօք հրա-ժարեցաւ ոչ մտանել ի յայն ջոկ», — ա-սում է պատմիչը: Ըստ երևույթին, Հով-հաննես վարդապետն ունեցել է և իր հակա-ռակորդները թե վանքից դուրս և թե վան-քում. իր մի քանի միաբանակիցները, որոնց նա հաճախ հանդիմանել է իրենց դէմ կենցաղավարութեան համար, թշնա-մացել են նրա հետ և հալածել: «Ի նոցանէ

ոչ ոչ անսաց զբանից երանելոյ առն Աստուծոյ, այլ նշկահեալ արհամարհէին զնա և զբանս նորա. և այսպեղանակ բանիւք նախատական առնէին զնա. և երկիծուցանէին և զբազումս շարադրեալ զրոց նորա հրկեզեալ այրեցին առ նախանձուք:

Բանը հասնում է այնտեղ, որ «երանելին» չի կարողանում այլևս վանքում մնալ և հեռանում, գնում է իր հօր տունը: Ներքին հավատարիմ և բարեկամ է մնում միայն Աստվածատուր վարդապետ Աղափին. ուս այն անձնավորութիւնն է, որ 1707-ին էջմիածնից Ալեքսանդր Ա. կաթողիկոսի կողմից ուղևորվում է Գ. Պոլիս առաջին անգամ այնտեղ տպագրել տալու Ազաթանգեղոսը: Նույն այդ Աստվածատուրն է, որ այնտեղ դառնում է Բաղդասար Դպրի ուսուցիչը:

Իր ո՞ր տարիքումն է Հովհաննես վարդապետը հեռացել վանքից և կամ նորից չի վերադարձել Ամենափրկչի միաբանութիւն, այդ մասին պակասում են տեղեկութիւնները. այս է միայն հիշատակվում, որ նա մահացել է 1716 թվին, 74 տարեկան հասակում, «որոյ յիշատակն օրհնեալ եղիցի»:

Հոնտուր, աստվածաբան և մի շարք դրանք աշխատութիւնների հեղինակ Հովհաննես վ. Մրբուզը եղել է նաև զարդանկարիչ և պատկերահան: Մեր աղբյուրների միաձայն վկայութեամբ նա է նկարագարել Նոր Զուղայի Ամենափրկչի եկեղեցու ներքին պատերը հարուստ օրնամենտացիայով և սյուժետային պատկերներով:

Պարսից պատմութեան հեղինակը՝ Խաչատուր Զուղայեցին «տիեզերալույս» վարդապետի այնքան բարեմասնութիւնները թվելիս, չի մոռացել հիշատակել, որ նա «գլխէր նկարագրել զպատկերս. որ սա իսկ նկարագրեաց զրոյր պատկերսն զոր ի Տան Տեառն Աստուծոյ մերոյ, յոյժ գեղեցիկ յօրինուածովք» (էջ 210): Հետագայում նույն բանը հաստատում է Հրեկաստանի «Ազգասէր» ամսագրում մի հիշատակագիր՝ իր կողմից ավելացնելով, որ

Հովհաննես Մրբուզը իր արվեստը սովորել է մայրաքաղաքում (Մպահան) Ասիայից և Եվրոպայից եկած արվեստագետներից: «Բացի զբաւոր մականութեանց իւրոց հրմուտ էր երանելին (Մրբուզը) նաև այլոց ազատական արուեստից: Գլխէր զնկարչութիւն կամ զպատկերահանութիւն, որով զարդարեալ գեղեղեցի վանացն Ամենափրկչի հրաշագան պատկերօք, իւրով իսկ ձեռամբ նկարելով զնոսին»: Քիչ հետո նույն հիշատակագիրը ավելացնում է. «Այս ընդհանուր շինութիւնք Հայոց և Պարսից հարկաւորապէս համախմբեալ ժողովէին անդր հմուտ արուեստաւորս ամենայն աշխարհաց յԱսիոյ և Եւրոպոյ... յորց ինչ զարմանք թէ և կորովամիտ վարդապետն մեր ուսեալ և կատարեալգործեալ եղև զարհեստն պատկերահանութեան» («Ազգասէր» 1845, էջ 96):

Ավելի ուշ՝ Նոր-Զուղայի պատմութեան հեղինակը, իր գրքի Ա. հատորում խոսելով Ամենափրկչի վանքի մասին, հիացմունքով է նկարագրում նրա ներքին բարեզարդութիւնը, հիշատակելով նույնպես, որ նկարագրումսն գործը պատկանում է Հովհաննես «տիեզերալույս» կոչված վարդապետին: Նա միանգամայն հավատացած է այդ բանին՝ նշելով, որ եկեղեցու մեջ, հյուսիսային պատին, մի տեղ նկարված կա մի վարդապետի պատկեր և դա ինքը նկարելն է, որ նկարել է իրեն:

Տեր-Հովնանյանցը իր աշխատութեան մեջ «ոսկեպանոյձ» ծաղկանկարների հետ միասին թվում է հարյուրի հասնող «տնօրինական պատկերներ»: Նկարիչն սկսել է Աղամ-Եվայից, օգտագործել է բերլեական և հայ պատմական բաղմաթիւ սյուժեներ, նյութ ընտրելով նաև բարդ կոմպոզիցիաներ:

Ահա այդ պատկերների սեղմ թվարկումը «պատկերատունների» բաժանված.

«Ի շուրջանակի կամարս դմբեթին են ութն յուսամուտ պատուհանք և ութն պատկերատունք: Առաջին պատկերատունն է Ստեղծանին Աստուծոյ զԱղամ, երկ-

բորդ՝ Մտեղծանելն զեւա ի կողէն Ադա-
մայ. երբորդ՝ ձաշակելն նոցա զպտուղն,
չորբորդ՝ Ծածկելն տերեւով զամօթս իւր-
եանց, չինդերորդ՝ Արտաքսէնն նոցա ի դը-
րախտէն, վեցերորդ՝ Մահն Արէլի, յոթն-
երորդ՝ Կոծ նախահարցն ի վերայ գիւակին
Արէլի և ութերորդ՝ Պատարագն Կայէնի և
Արէլի»:

«Ի դասն առաջին և ժողովրդատեղին
չորս կարգ պատկերատանց բաժանին. ա-
ռաջին կարգն են փոքրիկ պատկերատունք
ծաղկենկար և դանազան խորհրդական նը-
կարք, ընդ որոն են՝ Պատկեր չարչարանցն
Լուսաւորչի և եօթն խորհուրդք եկեղեց-
այ: Երկրորդ կարգն են Տնօրինութիւնք
Քրիստոսի (թվարկում 26 պատկերներ)
Ավետարանից սկսած մինչև Հոգեգալուստ) և
Վերափոխումն Տիրամօրք:

«Երրորդ կարգ պատկերատան ըստ նո-
ւին դասաւորութեան են այսոքիկ. (թվար-
կում 26 պատկերներ չին կտակարանից):

«Չորրորդ պատկերատունք են յան-
կինս կամարաց և են այսոքիկ (թվարկ. 8
պատկերի, զարձայլ չին կտակարանից):

Այսպիսով չին Զուգայի պատմութեան
հեղինակը՝ Տեր-Հովնանյանցը թվում է Ա-
մենափրկչի վանքում բոլոր պատկերները,
որոնց մեջ բարդ կոմպոզիցիայի գործեր են
երևում՝ Զրհեղիլը, Վերջին դատաստանը,
Դժոխքը, Նոյի տապանից դուրս գալը,
Իսրայելացոյ՝ Կարմիր ծովից անցնելը և
այլն: Նկարչութեան համաշխարհային
պատմութեան մեջ սրանք բխրական այն
ծանոթ սյուսններն են (բացի Լուսաւորչի
չարչարանքներից), որոնցով, ինչպես
հայտնի է, զբաղվել են Վերածնութեան
դարաշրջանի խոշոր արվեստագետները:
Մենք ձեռքի տակ ունենք Ամենափրկչի
պատկերներից միայն՝ երկու լուսանկար,
որ ստացել ենք շնորհիվ բանասեր Ասլան
Շահնազարյանի: Այստեղ առաջ ենք բերում
այդ լուսանկարները գաղափար տալու հա-
մար Հովհաննէս Մրքուզի նկարչական ըն-

դունակութեանն ընդ մասին: Թե Ա. և Թե Բ.
նկարների վերին մասերում պատկերացված
են եկեղեցու յոթ խորհուրդներից Մկրտ-
տությունը և Հաղորդությունը: Ներքևի
մասերում՝ Լուսաւորչի չարչարանքներից
չորս տեսարան: Տեր-Հովնանյանցը հավա-
նական է գտնում, որ Հովհաննէս Մրքուզն
ունեցել է վարպետ օգնականներ: «Ինձ
հաւանական թվի կարծել, թե առանց օգ-
նականի կամ գործակցի զժվարին էր նմա
հանգաւորել զգործն պատկերացն և ծաղ-
կանց, ուստի եթէ եղեալ են նմա օգնական
կամ գործակիցք, եղեալ են ներհուն պատ-
կերահանք»:⁹

Ամենափրկչի եկեղեցու որմնանկար-
չութեան մասին ընդհանուր առմամբ այս
կարելի է ասել, որ զարգանկարները, օր-
նամենապիսին խառնուրդ են պարսկական
և հայկական ոճային մոտիվների, բայց
վարպետ սիստեմի վերածած, իսկ պատ-
կերները դերազանցապես հայկական են և
մեծ չափով կրում են մեր մանրանկարչական
գործերի ազդեցութիւնը: Սակայն այս
ամենի մասին սպառիչ կարծիք հայտնելու
համար պետք էր տեսած լինել օրիգինալ-
ները իրենց տեղերում և իրենց գույներով,
իսկ միայն երկու լուսանկարներից դատե-
լով՝ դժագուքայն և կոմպոզիցիայի տեսա-
կետներով՝ այսքանը կարելի է ասել, որ
Հովհաննէս վարդապետը և նրա օգնական-
ները իրոք որ եղել են «ներհուն պատկե-
րահանք»:

Ըստ երևույթին այստեղ պետք է վեր-
ջացնենք մեր հոգւածը Հովհաննէս վ.
Մրքուզի մասին, զիտեղով. նրան որպես
հոեւոր, աստվածաբան և նկարիչ, սակայն
ոչինչ չունենալով ասելու նրա առաջին եր-
կու բարեմասնութիւնների մասին, մենք
կարևոր խոսք ունինք ասելու երրորդի՝
նկարչի մասին առաջադրելով մի կնճառ
խնդիր, որ ծառանում է ինքնըստինքյան
ժամանակագրութեան տեսակետից: Դանն
այն է, որ մեր բոլոր աղբյուրները, որ

⁹) Լուսանկարները վատ էին նկարված, ուստի և հնարավոր չէրավ մեջ բերել:

միաբերան վկայում են, թե Ամենափրկիչ եկեղեցու որմնանկարները պատկանում են Մրջուղին, չեն անդրադարձրել այն կարևոր հանգամանքի վրա, թե հիշյալ վարդապետը երբ է նկարել այդ որմնանկարները: Եկեղեցու վերաշինությունն սկսվել է 1655 թվին և տևել է 9 տարի, ասել է թե ավարտվել է 1664-ին: Ներքին բարեկարգության, նկարչական դործերի մեկենառը եղել է տեղական հարուստներից մեկը՝ Խոջա Ավետիքը, որի պատկերը նույնպես նկարված կա տաճարի մեջ հետևյալ ոսկե գիր արձանագրությամբ՝

«Ձձկն աղաչեմ ընթերցող տառիս
Յիշել նկարող սուրբ խորանին
Որ միշտ տարփմամբ ցանկայր բանի
Սա զԱւետիք զհեղահոգիս...
Ի թիվն Ռձ տասնին
Ապրիլ ամիս Ի և էիս:

Իայց այս թվականը՝ 1661-ը Ավետիքի մահվան թվականը չէ: Նույն եկեղեցու վրա կա և մի ուրիշ արձանագրություն, որ տալիս է նրա մահվան տարին՝ 1670 թվը:

Ի թուին ՌձԺԸ փետրուարի Ե. փոխեցաւ Խոջա Աւետիքն ի Քս և ետ ծաղկել զսուրբ եկեղեցին յիշատակ իւրն և իւր ննջեցելոցն:

Պետք է ընդունել, ուրեմն, որ Ամենափրկիչ եկեղեցում բոլոր նկարչական աշխատանքները կատարված են 1660-ականների առաջին հնգամյակում: Արդ՝ հարց է ծագում, թե այդ ժամանակ ի՞նչ տարիք է ունեցել գլխավոր նկարիչը՝ Հովհաննես Մրջուղը:

«Պատմութիւն Պարսից» աշխատության հեղինակը, որ ինչպես նշել ենք վերևում, Ամենափրկչի նկարների հեղինակ համարում է Մրջուղին, դրում է, որ «Երանելի հայրն մեր կնքեաց զարդիւնալիւր և զարդասաւոր կեանս իւր ի բարւոք ծերութեան ի հաղար հարիւր վաթսուն և հինգ (1716) թուականին և ի եօթանասուներորդի և չորրորդի ամի հասակի կենաց իւրոյ...»: Ուրեմն ըստ այս հաշիվ Մրջուղի ծննդյան տարին պետք է ընդունենք 1612 թվականը: Այստեղից հարց է ծագում, թե 1660-ականների սկզբի տարիներում, երբ մեր վարդապետը եղել է հազիւ 20—22 տարեկան, կարո՞ղ էր այդպիսի նկարչական աշխատանքներ կատարել: Մնում է մեզ ընդունել երկու կարծիքներից մեկը՝ կամ Մրջուղի մահվան թվականի ու 74 տարեկանի լինելու մասին Խաչատուր Զուղայեցու տված տեղեկությունը համարել անընդունելի, կամ ընդունել, որ Նոր Զուղայի եկեղեցու պատկերների հեղինակը Հովհաննես Մրջուղը չէ: Մենք ավելի հավանական ենք գտնում առաջինը. ճիշտ է, որ է «Տիեզերալույս» վարդապետը մահացել 1716-ին, բայց ոչ թե 74, այլ 84 տարեկան «բարւոք ծերութեան» հասակում, որով, ուրեմն, նրա ծննդյան թվականն էլ չարժեքով 10 տարի, եկեղեցին նկարադարձելիս նա եղած կլիներ 30—32 տարեկան:

Այս խնդրի ճշտումը թողնում ենք հետագա բանասիրության:

Գ. ԼԵՎՈՆՅԱՆ

Արվեստի վատասկավոր գործիչ

Ս. ԷԶՄԻԱՅՆԻ Ս. ՏԱՄԱՐԻ ԶԵՌԱԳԻՐ ԱՎԵՏԱՐԱՆՆԵՐԸ

Մուրբ էջմիածնի մայր տաճարում հա-
վատացյալ ուխտավորներից շարունակվում
են ստացվել ձեռագրեր, որոնք նկարազը-
րված չեն և հայագիտության համար մեծ
պոֆեք են ներկայացնում: Մենք նպատակ
ենք դնում այդ ձեռագրերը նկարազրել
«էջմիածնի» էջերում:

№ 1 ավետարան: Զեռագիրը 15 դարի
գրչություն ունի. գրված է թղթի վրա:
Գրիչն է Մովսես արեղան: Զեռագրի կաղ-
մը տախտակյա է, պատած դրոշմադարձ
կաշվով: Առաջին երեսին փակցված է ար-
ծաթյա թիթեղ մոտ մեկ միլիմ. հաստու-
թյամբ եւ 14×18 սանտ. մեծությամբ:
Թիթեղի վրա պատկերված է Քրիստոսի
խաչելությունը: Երեք չարք չրջանակների
մեջ, կենտրոնում խաչված Քրիստոսն է,
իսկ աջ և ձախ կողմերում կանգնած են
Մարիամը և Մարթան: Շրջանակի ներ-
սում, չորս անկյուններում, կան մեկական
թեափոր հրեշտակներ: Կաղմի և ավետա-
րանի միջև առաջից և վերջից ամրացված
են երկու թերթ պահպանակներ: Դրանք հին
մազադաթյա ավետարանից կտրված պա-
տուկներ են՝ գրված գեղեցիկ համաչափ
բոլորաձև երկաթաղիք տառերով:

Ավետարանի մեծությունն է 13×18
սանտ.: Դրված է երկսյուն: Սյուների չափն
է 4×12 սանտ.: Յուրաքանչյուր սյունյակն
ունի 17 տող: Դրությունը բոլորազիր է:
Ավետարանը պարունակում է 380 թերթ:
Վերջին չորս թերթը գրչի հիշատակարանն
է:

Յուրաքանչյուր ավետարանի առաջին
թերթի երկրորդ երեսին նկարված է ավե-
տարանչի դունավոր պատկերը: Պատկեր-
ները բավական նորբ են, օրիգինալ, հայ-
կական գլխադներով: Զեռագրի լուսանց-

ները դարդարված են ծաղկանկարներով:
Նկարիչը օգտագործել է գլխախորապես
կարճիկ և կապույտ դույններ:

Ուշադրության արժանի է, որ Հովհան-
նու ավետարանի վերջում գրիչը լուսանց-
բում, «Իրք կնոջն շնացելոյ» վերնագրից
հետո, իրրե լրացում, տալիս է Հովհան-
նու ավետարանից գլխ. է—53 և գլխ. Ը
1—13 հատվածները:

Այդ հատվածները բնադրի համապա-
տասխան տեղում բաց են թողնված: Այդ
լրացուցիչ դրանցումից անմիջապես հետո
գրիչը՝ Մովսես արեղան տալիս է հետևյալ
պարզաբանումը. «Զայս յիշատակ բանի
ընկալաւ եկեղեցի յասորոց աւետարանէ,
բանիւ Պապիասայ ումեմն Յովհաննու ա-
շակերտի, որ և յետոյ հերձուած խաւսե-
ցաւ և խոտեցաւ»: Եւ է կարդ բանիս յութ-
սուն ու վեց համարն զկնի այնմ բանի որ
ասէ՝ «Քննեայ եւ տես, զի մարդարէ Գալի-
լէէ ոչ յառնէ: Եւսերի է ասացեալս»:

Այս պարզաբանությունից հետո ղետեղ-
ված է գրիչ Մովսես արեղայի հետևյալ
հիշատակարանը.—

«Փառք ամենասուրբ երրորդութեան
այժմ և յաւիտեանս յաւիտենից ամէն:

Շնորհք և ողորմութիւն և դուհութիւն և
փառաւորութիւն և երկրպագութիւն մար-
դապետ և բարեբար երրորդութեան և մի
Աստուածութեան Հաւր և Որդոյն Հոգւոյն
Սրբոյ յամենայն դոյից, յաւիտեանս յաւի-
տենից ամէն:

Ըստ ամենաառատ շնորհացն Աստուծոյ
անբաւառէս հեղեալ և մարդիկ, բաղձա-
ղիմիք են տեսակք բարեաց և ճանապարհք
փրկութեան որովք հնարաւորին ցիր և
ճապող ախորժակք մարդկան. աւրինակաւ
իւրք առկցորդութիւն բարւոյն յարձակիլ,

և այնու պատճառաւ ըստ չափոյ կարողութեան յԱստուած մերձենալ և բարւոյ մասին իմիջ հանդիպել: Որոց մեծն և նշանաւոր, արեամբ չափ նահատակիլն, որպէս վիպիցն, որ է կատարելագոյն առ Աստուած նշանակ սիրոյ և այլքն ըստ նմանէ, կամ անձնական նուէրք Աստուծոյ որպէս ճգնողական ժուժկալութիւնք, կամ առ ընկերս բարեգործութիւնք. որպէս այլ բարոյս ինչ այսպիսի: Ընդ որս և յորոց ի բարեաց մասանցն է և դերս աստուածայինս ստանալ ի փառս Աստուծոյ, ի սէր, ողորմութիւն, խոնարհութիւն, եւ շահ անձին, և յաւգուտ հասարակաց, ի պայծառութիւն լրման եկեղեցւոյ և ի կատարումն աստուածաւանդ կարգաց քահանայութեան, որ և տիրապէս անընդմիջաբար յԱստուծոյ սուեալ ի մարդիկ մեծ և աստուածային պարզե: Եւ յետ Աստուծոյ փոխանակ Աստուծոյ աւրինաբոջ մարդկան և ուսուցիչ զկամս Աստուծոյ: Որոց ծայրք և կատարումն աստուածայնոց տառիցն աւետարանս սուրբ: Որ ունի յայտնապէս ճշմարտութեամբ զպատմութիւն աստուածեղէն մարդեղութեան Քրիստոսի: Այն որ զլորումն մարդկան ազգի կանգնեաց վերստին անկասկած հաստատութեամբ, որոց հաւատասցեն աստուածագործ անաբէնութեան նորա և փրկական ճանապարհաց նորա հեռեմամբ ժամանեցեն բացերես համարձակութեամբ տեսնել զնա ի միւս անգամ զալստեան նորա. և լսել ի նմանէ զերանակաւ կոչումն: Մըմին այս աստուածաւանդ սուրբ աւետարանիս ցանկացայ ես նուազս և անպիտան ծառայս Աստուծոյ բազմամեղ փցուն և անարհեստ դրիչս սուտանուն Մովսէս արեղայս: Իսկ յաւժարութիւն սրտիս և կարողութիւն և մարդասիրութիւն Աստուծոյ որ յամենայնի կարող է և անյուսից յոյս է և անաւանականից աւդնական, որ ոչ անտես առնէ զյուսացեալս յինքն: Ի շնորհ նորա ապաւինեալ սկսայ և նա ետ կարողութիւն հասանել յաւարտ սորա:

Այլև գրեցաւ սա յաղնիւ աւրինակէ յամենեւնաւոր: Մի նա՝ նաև յարուեստ բա.

նի ոչ յաննշան դրէ, այլ լի և կատարեալ արուեստիւ, ի բանս, ի բառս, ի լծորդս, ի բացատոս, ի տրոհմունս առողանութեանց, ի ստուգութիւն կետից, և ոլորակաց և սոցայցն սակեաց: Վասն որոյ աղաչեմ զսուրբ դասս քահանայից առհասարակ զհանդիպաւդսդ, որք վայելէք:

Ի քացիաճաշակ եղեմարուս վտակաց քառաւաղեայ հոսանաց կենդանական աստուածախաւս սղարբ աւետարանիս, մանաւանդ յորժամ բառնայք ի ժամ սոսկալի պատարադին, յորժամ խաղան ի վերուստ յողջոյն Ձեր իջանկով զսուրբ հրեշտակաց և սքողեալ ահիւ խառնին ընդ Ձեզ: Յայնժամ նովին սուրբ աւետարանաւդ՝ և միջնորդական կենարար հրաշիւք սուրբ պատարադին յիշեմիք զստացող և զգծադրող սուրբ աւետարանիս դրաղմտեղս (բաց է քաղնված անվան տեղը) և զանարժան զՄովսէս արեղայս և զհայրն իմ զՄտեփաննոս, և զմայրն իմ Ձեղիտաբէթն, և զամենայն արեան մերձաւորսն մեր, նաև զուսուցիչն իմ զսէր Կիրակոս եպիսկոպոսն և զամենայն երախաւորսն մեր ողորմութիւն դառնե յահեղ աւուրն համառատի ընդ ամենայն սուրբս ի տեսնէ մերմէ Յիսուսէ Քրիստոսէ և որ յիշէք զվերոյ գրեալքս ի բարին: Քրիստոս Աստուած որ մեծն է ի պարզեւս բարեաց զյիշաւդսդ և զյիշեցեալսս արժանի արացցէ ողորմութեան իւրոյ և նմա փառք յաւիտեանս յաւիտենից, ամէն: Բայց գրեցաւ սուրբ աւետարանս ի թուականիս հայոց ՁԼԵ ի հայրապետութեան տեսուն Սարգսի ձեռամբ մեղսայմած և անխմատ գրչի, Մովսէս արեղայի ի գաւառս որ աթմ ասի Բաքերթ, ի յանապատն որ կոչի Անլոց, ընդ հովանեաւ սուրբ Ածածնին, և Յովհաննու Կարապետին, ի յառաջնորդութեան վանացս տէր Մեղեաուն արեղայի, որ ձեռացեալ անձամբ ապաստաւորէր մեզ ի գրել սուրբ աւետարանիս: Աստուած զիւր հոգին և զիր բարի ծնաւդացն հողին, անմահական հացովն կերակրէ: Յիշեմիք և զԳոհար տընտեսն, որ բաղում աշխատութեամբ սպասա-

ւորէր վանացս, Աստուած զիւր հոգին չուսաւորէ:

Այլև յերես անկեալ աղաչեմ զհանդիսողոսդ, խոշորութեան և սխալանաց ան...

(Հիշատարանի շարունակութեան թերթերը չկան):

Այսպիսով պարզվում է, որ ավետարանը գրված է 1486 թ. (հայոց 935-ին), Մովսես արեղայի ձեռքով (Ստեփանոսի որդի) Բարեբեթի Անլոց անապատում: Կարևոր է նշել, որ Հիշատարանում պատվիրատուի անունը բաց է թողնված: Հավանական է՝ զբիշը զրեւ, պատրաստել է վաճառելու համար, դնողը պիտի հանդիսանար պատվիրատուն և անունը գրվեր բաց թողած տեղում:

Բացի զբիշ Մովսես արեղայի Հիշատարանից կան նաև ստացողների Հիշատակագրությունները:

Մատթեոսի ավետարանի առաջին թերթի պատկերի հետևի բաց երեսին 1621 թվին Սոֆա Երրաքի պատվերով՝ որպես գնդի արձանագրված է «Վերջին ստացող սուրբ աւետարանիս գլխոճայ Երրաքին և իւր կողակից Սանիմաթին, որ ըստացան հալալ ընչից քրտնաջան աշխատանաց՝ զառատարուի քառավտակ դետոց պողաքերել և լուսաւորել զաղէս որդոց մարդկան: Արդ հոգին Աստուած աւրհնեցէ զհոգին պարոն Երրաքին և իւր ամուսնուն Սանիմաթին: Ով քահանայք պատեալք յԱստուծոյ, յորժամ ընթեռնուք զՍուրբ աւետարանս կամ աւրինակէք, յիշեցէք և Աստուած ողորմի ասացէք, յիշեալ լիջիք դուք ի Յիսուս Քրիստոսէ ամեն. ի թվիս մերում հայոց Ռէ ի թվականիս հայոց ՌՁԳին հոռոմքն ծրուսպատիկ արարին շատ առմունք եղաւ, անչափ չարիք դործեցին...:

Շարունակությունը մոտ երեք տող սրբված է և անընթեռնելի է:


Մատթեոսի ավետարանի առաջին թերթի պատկերի յետևի բաց երեսին գրված է...» Վերջին ստացող սուրբ աւետարանիս հոգիսէր կինս այս Շահրիստանս, որ քրտնաջան վաստակով էառ զառատարուի քառավտակ դետոց յաւժար կամաւք և փափաքանաց, աղատեաց ի յանաւրինաց ձեռանէն, որ կոչի Աբաղայ փաշայ, որ զտէր Անանիան թալանեցին յԱրդրումայ գաշտն ի թվիս հայոց Ռ. Հ. Զ.-ին: Որ էառ ողորմելին կինս այս Շահրիստան յիշատակ իւր և կողակցին Ամիրասէ և իւր որդոցն Մարտիրոսին, և Էնիաթին, և Ղաղարին, և Պունիաթին և դստերացն Արզուին, և Թուրվանդին: Ստացօ և ես այլևի տէր Անանիին. տէրն Քրիստոս զինքն իւր մեղացն աղատեացէ և արքայութեան արժանի ապացէ, ամէն: Հայր մեր որ...: Այսպիսով մենք իմանում ենք, որ ավետարանը ժամանակին ընկել է Աբաղա փաշայի ձեռքը և Շահրիստան անունով մի հայ բարերար տիկին 1626 թ. դնել ու վերադարձրել է տէր Անանիային, որը, հավանական է, իրենց ծխատի քահանան է հանդիսացել: Ղուկասու ավետարանի պատկերի մյուս երեսում կա այսպիսի հիշատակագրություն —

«Յիշատակ է սուրբ աւետարանս Մանուկին և Մարդարտին և Բարկուսին և Յակոբին Կուրին, Մհակին և Յոհանէս և Բաղդոին. ըստացան սայ հալալ ընչից իւրեանց յիշատակ ձեռն տէր Մելիքսէթին»:

Հետագա ժամանակներում ստացողներն ևս արձանագրել են իրենց անունները ավետարանի զանազան տեղերում:

(Շարունակելի)

ԵԶՆԻԿ ՎԱՐԴԱՊԵՏ



Ս ՀՈՒՓՍԻՄԵՆ ՎԱՆՔԸ *)

*) «Էջմիածին» ամսագրում պարբերաբար տրվելու են պատմական հուշարձանների լուսանկարները, Այժմ գտեղում ենք Հռիփսիմեի վանքի լուսանկարը:

ԽԱՉԱՅՈՒՐ ԵՐԵՑ ԿԱՓԱՍԵՅՈՒ ՏԱՐԵԴՐՈՒԹՅՈՒՆԸ

ՀՍՍՌ Մատենադարանի գրչագրաց թեմատիկ բերլիոգրաֆիայում վերջին տարիներս գրանցվել են մեր ձեռագիր ժողովածուներում հայտնաբերված մի շարք չհրատարակված և արժեքավոր տարեգրություններ։ Այդ տարեգրությունների աննոտացիաները, հետաքրքրվող մանադեմոստրիկ դյուրություն տալու նպատակով, մենք հրատարակել ենք Մատենադարանի «Գիտական նյութեր»-ի ժողովածուի առաջին հատորում¹⁾։ Մատենադարանի գրեկցիայի հանձնարարությամբ մենք կադմել ենք նաև չհրատարակված կարևոր տարեգրությունների մի ժողովածու²⁾, որը չուտով հրատարակության կհանձնվի։ Տարեգրությունների այս ժողովածուի մեջ մտնում են՝ Կիրակոս Ռշտունու, Հակոբ Դարբնեցու, Դավիթ Բաղիչեցու, Ստեփանոս Դաշտեցու, Երեմիա Քյոմերճյանի և այլոց տարեգրությունները։

ՀՍՍՌ Մատենադարանում, մոտ ժամանակներս, մեզ հաջողվեց նաև հայտնաբերել խաչատուր երեց Կաֆայեցու տարեգրությունը, որի հետ անհրաժեշտ ենք համարում ծանոթացնել մեր ընթերցողներին։ Բայց նախքան Կաֆայեցու անձնավորության և տարեգրության վրա կանգ առնելը, համառոտակի մի քանի խոսք ասենք այն մասին, թե ինչ էր ներկայացնում իրենից միջին դարերում Կաֆան, ներկայիս Թեոդոսիան, որպես հայ գրչության կենսորոն։

Կաֆան հայ գրչության կարևոր օջախներից մեկն է հանդիսացել։ Հայ գրչու-

թյունը Կաֆայում իր ծաղկման չրջանն է ապրել հատկապես 14-րդ դարում։ ՀՍՍՌ Մատենադարանում կան բազմաթիվ ունեկում գրչագրեր, որոնք գրված են այդ ժամանակաշրջանում։ Այդ գրչագրերից հատկապես արժեքավոր են՝ Կարապետ երեցի (№ 7741), Մարգար գրչի (№ 7447), Խիրացու Ստեփանոսի (№ 7471), Հովհաննես գրչի (№ 7430) և Մարկոս գրչի (№ 7438) գրչագրերը, որոնք Մատենադարան են եկել Նոր Նախիջևանի ձեռագրաց ժողովածուի հետ։

Մեզ հասած պատմական որոշ տեղեկություններից երևում է, որ Ղուխում մենք ունեցել ենք հայկական մի խոշոր հատված։ Բավական է ասել, որ միայն Կաֆայում հայ լուսավորչականներն ունեցել են քառասուն և հինգ եկեղեցի, որից 29-ը պարսպի մեջ, իսկ 26-ը պարսպից դուրս։ 18-րդ դարում այդ եկեղեցիներից 24-ը դեռևս կանգուն են եղել և հայ տաղերուներից մեկին անհրաժեշտ է համարել իր տաղերից մեկում երգել դրանք չարքով։

«Քեֆէ, կասեն, մեծ քաղաք է,
Թաքաւորաց հաստատած է,
Քառն չորս եկեղեցի է,
Քարերն ամեն սրբատաշ է,
Քեֆէ քաղաք ծովափայտաց,
Եկեղեցիքն գալիքարած...»³⁾

Ղուխի հայ գաղութն այնքան մեծ է եղել և նրա դարձունեությունն այնքան աչքի ընկնող, որ ճենոփացիներն իրենց իրավունք են համարել այդ «Ծովադիտակ և հոյակապ մայրաքաղաքը», իր հարևան

1) Տես մեր հոդվածը «Համառոտ բերլիոգրաֆիա ՀՍՍՌ Մատենադարանի գրչագիր մանր ժամանակագրությունների», ՀՍՍՌ Մատենադարանի գիտ. նյութ. ժողովածու, էջ 207—223։

2) Այդ տարեգրությունների տեքստը կազմելիս մեզ օգնել է ուսանողուհի Մ. Մաղումյանը։

3) Լ. Բ. Վ. Քուչներյան, Պատմություն գաղթականության իրիմու հայոց, Վենետիկ, 1805, էջ 141։

շրջանների հետ անվանել «Armenia maritima» («Մովսիսի Հայաստան»¹⁾։

Մարտիրոս գրիչն իր Կաֆայում գրած մի ձեռագիր հիշատակարանում հետևյալ ձևով է գովերգում Կաֆա քաղաքը․

«Քաֆա քաղաքը նման դրախտի,
ի նրուսադեմ սուրբ քաղաքի,
Մեծ Հռոմայ, և Ըստակցոյի,
Շամա, Մաբա, և Եգիպտոսի,
Վանքեր քաղում եւ քաղցրի,
Եկեղեցիք շուրջանակի,
Նըման վերնայն սուրբ Սիմնի,
եւ տաճարին Սողովունի...»²⁾։

Ներկա տարեգրության հեղինակ խաչատուր երեց Կաֆայեցին եկա մեծ գովեստով է խոսում Կաֆայի մասին։ «Կաֆա քաղաքը — գրում է նա — հիւսիսական կողմն Հոնաց երկրի, որ բոլոր զկաթն եւ դմեղըն»³⁾։

Կաֆայի հայ դպրոցն առանձնապես աչքի է ընկնում իր տաղերգուներով։ Միայն 16—18-րդ դ. դ. «Կաֆայեցի» մականվամբ մենք ունեցել ենք յոթը տաղերգու։ Գրիգոր Կաֆայեցի, որը հայտնի է Աստվածատուրի վրա գրած տաղով, խաչատուր Կաֆայեցի, կամ որ երբեմն հիշվում է իսապեկ, որը հայտնի է «Արի որ պաղչան մտնում», «Գլուխ համարց ազգին կամանց», «Եկ սիրելիս ուրախացում», «Տաճար լուսեղէն» և այլ տաղերով, ինչպես նաև Կաֆայեցի, որը հայտնի է «Գեղեցիկ պատկեր», «Յանկարծակի մէկ մի տեսայ» և այլ տաղերով, Հովհաննես Կաֆայեցի, որը հայտնի է «Ի սուգ կոծայ» և «Յայս ցնծեալ բերկրիմ» տաղերով, Ստեփանոս Կաֆայեցի, որը հայտնի է «Սիրով սիրայդ սէր բորբոքեալ քաղաքի» տաղով, Վարդան Կաֆայեցի, որը հայտնի է «Հիւսիսական կողմն աշխարհի», «Ճառագայթ փառաց» և այլ տաղերով — և Վրթանես Կաֆայեցի,

որը հայտնի է, «Իմնեալ դառաց...» տաղով։ Ձեռք խոսում դեռ Կաֆայեցի բազմաթիվ այլ գրիչների մասին, որոնք իրենց հիշատակարանները գրել են Հովածո։

Կաֆայի հայկական դպրոցին պատկանող գրչագրերն աչքի են ընկնում իրենց խնամքով և գեղեցիկ գրվելու արվեստով։ Գրիչներն անհամեմատ գրագետ անձինք են և քիչ են սխալները։ Ուշադրութան արժանի է, որ Ղուիմում գրված ձեռագրերի մեջ շատ են պատմագիտական բովանդակութուն ունեցող ժողովածուները և տաղարանները։ Պարզվում է, որ Ղուիմում գրչության արվեստով դարձվող յուրաքանչյուր անձնավորութուն պարտավոր էր լինել յուրացնել Գրիգոր Սկեվոացու և Արիստակեսի գրչության արվեստին վերաբերող աշխատութունները։ Այսպես, Ղուիմի Սուրխաթ քաղաքում 1357 թ. ընդօրինակված Ստեփանոս գրչի հիշատակարանում կարդում ենք. «...Սա է (Այսինքն Գեղարգ Սկեվոացու և Արիստակեսի գրչության արվեստի աշխատութունները։— Ա. Ա.) քանոն եւ գաղափար ամենայն արհեստից, եւս առաւել որք փութան ձեռնարկել յարհեստ գրչութեան։ Զի որպէս անհնար է թունոց ի լուծ լծել եւս ակաւս պատուել, եւ կամ եղանց յաւալ վերանալ, նոյնպէս առանց աշխատելոյ ի սմա ոչ ոք կարէ հասու լինել արուեստին մեծի գրչութեան. եւ որ յանդգնի համարձակել, ոչ կարէ գրել ճշմարիտն, այլ փոխանէ զարուեստն եւ ազաւարդէ զգրչին... զի որպէս մարդարիտ ի քիթս խողի, եւ մանեակ ոսկի ի պարանոց իշոյ, այնպէս եւ սա (այսինքն գրչության արվեստը) ի ձեռն անխմաստ եւ անմիտ առնն...»⁴⁾։

Ղուիմի կուլտուրական դպրոցները մեկում դաստիարակութուն ստացած սաներից մեկն է մեր ներկա Տարեգրութեան հեղինակ խաչատուր երեց Կաֆայեցին։

1) Հ. Բ. Վ. Գուլյենյան, Պատմութուն զաղթականութեան իրիմու հայոց, էջ 73։

2) ՀՄՍՈ Մատեն. գրչագիր № 2672 (հիշատակարանից)։

3) խաչատուր երեց Կաֆայեցու Տարեգրութունը, էջ 3 (Կաֆայեցու Տարեգրութուններից բերված մեջբերումների էջերը մեր պատրաստած տեքստի էջերն են)։

4) ՀՄՍՈ Մատենադարան, № 2371, թերթ 237 ր։

Պաշատուր երեց Կաֆայեցին ծնվել է 1592 թվին։ Այդ երևում է իր ձեռագրում թողած հետևյալ հիշատակարանից.

«ՀԴ (64) հասեալ առ ափն դերեղմանի...»

Հետեւեցայ մինչ ի ՌՀԵ (1105) թվականին¹⁾։

Եթե հայոց 1105 թվականին, այսինքն ներկա 1656 թվականին, Պաշատուր երեցը եղել է 64 տարեկան, ապա նա ծնված պիտի լինի 1592 թվականին։

Թե ում մոտ է աշակերտել Պաշատուր երեց Կաֆայեցին, այդ մասին պարզ տեղեկություն մեզ հասնի չէ։ Հավանական է, որ նա դաստիարակություն ստացած լինի իր փեսա Պաշատուրի և ոմն Ավետիքի մոտ, որին նա հիշում է իրեն քահանա ձեռնադրելու կապակցությամբ. «... Աստուած լուսաւորէ հոգին Աւետիքին, եւ աշխատաւորին իմոյ տէր Պաշատուր քահանային, որ շատ դատեցաւ վասն իմ, որ է ինձ փեսայ եւ հայր...»²⁾

Տարեգրության մեջ եղած մի հիշատակությունից երևում է, որ Պաշատուր երեցը ամուսնացել է 1617 թվին 25 տարեկան հասակում. «Թվին ՌԿԶ...», ամսեանն աւգոստոսի, աւուր ԻԴ(24) կիրակի ուրբ Աննայի, մեղաւորս աշխարհ մտի եւ Խարսանիս արարի»³⁾։

Նույն տարեգրության մեջ եղած մի այլ տեղեկությունից երևում է, որ Պաշատուր երեցն ունեցել է երեք զավակ՝ Պուլիսկայը (տղան), Կարմիրիքը (մեծ աղջիկը) և Աննան (փոքր աղջիկը)։ Վերջինս երկրա հասակում մահացել է. «Ծնաւ որդին իմ Պուլիսկայ թվին ՌԿԸ (1618), յունիս Զ. (6), աւրն չարաթ»,—

դրում է Կաֆայեցին։—«Ծնաւ դուստրն իմ Կարմիրիք թվին ՌԿԹ (1620), դեկտեմբերի Է (7), աւրն հինգշաբթի. ՌՀԲ (1623) թվականին Աննախաթունս ծնաւ մեկ, դեկտեմբերի Թ (9) փոխացաւ առ Աստուած»⁴⁾։ Կարմիրիքը հետագայում, երբ հասակ է առնում, ամուսնանում է ոմն Արխատակեսի հետ։ «Աստուածային հրամանաւ,— դրում է Կաֆայեցին,— Ըռատաքէսն տունս առի, Կարմիրիքս տուի, հարսանիս արաք, պսակեցաք հոկտեմբերի աւաջի աւրն Վարադի խաչին երկուշաբթին»⁵⁾։

Նախկին Նոր Նախիջևանի ժողովածոում դանդաղ մի ձեռագիր հիշատակարանից երևում է, որ Պաշատուր երեցն ունեցել է մի այլ աղջիկ ևս Պուլիսկայի քաննունով։ Այս ձեռագրի պատվերատուն Պաշատուր երեց Կաֆայեցու որդին, Պուլիսկայի է։ Նա դրում է. «Յիշեալիք ի Քրիստոս Յիսուս ի տէր մեր դատացաւ սորա զպարոն Պուլիսկայէկն եւ զհայրն իւր զՊաշատուրն եւ զմայրն իւր Աննա խաթունն եւ զքոյրն իւր Պուլիսկայիքայն և քուրորդին զպարոն Աստուածատուրն...»⁶⁾։

Իր երիտասարդ հասակում Պաշատուրը կիսասարկավաղ է կարգվում Կաֆայի ուրբ Թորոս եկեղեցում, իսկ 1624 թվին, նույն եկեղեցում, ձեռնադրվում է ծխատեր քահանա։ Այդ մասին նա իր տարեգրության մեջ դրում է. «Թվին ՌՀԳ (1624) ամի, ամսեանն մարտի ԺԵ (15), աղուհացից վեցում կիրակին Լուսաւորչի, եւ զիս, անարժանս, հոգ եւ մոխիրս, յուլ եւ ծուլս, կիսասարկաւաղ Պաշատուր մեղաւորս, ձեռնադրեցին զիս քահանայ, որ չէի արժանի կարգի եւ աստիճանի...»⁷⁾

Այսպիսով, պարզվում է, որ Պաշա-

1) Պաշատուր երեց Կաֆայեցու Տարեգրությանը, էջ 38:

2) Նույնը, էջ 8:

3) Նույնը, էջ 1—2:

4) Նույնը, էջ 1—2:

5) Նույնը, էջ 26:

6) Գարեգին արքեպիսկոպոսի ձեռագրաց հիշատակարանների ժողովածու, V հատոր:

7) Պաշատուր երեց Կաֆայեցու Տարեգրությանը, էջ 8:

տուր երեցի աշխարհիկ անունը եղել է խաչատուր: Ձեռնադրութունից հետո նա ստացել է խաչատուր երեց անունը: «Յիշեալ զբազմամեղս խաչատուր երէց» — գրում է նա իր ծածկագիր հիշատակարանում:¹

1645 թվին, հինգ ամիս ժամանակով, խաչատուր երեց Կաֆայեցին քահանայապետության է դնում Բաղչիսարայ, իսկ 1619 թվին՝ ճանապարհորդում դեպի Կ. Պոլիս. «ՌՂԴ թվականին Պաղչսարայն գնացի, հինգ ամիս քահանայապետութիւն արի, տարեգիրն հաւյ էր, (ուզում է ասել խոյ էր — Ա. Ա.), զատիկն անարկի լինց էր... ՌՂԷ-ին (1642) Ըստամպաւ դրնացի՝ աւգոստոսին. նոյեմբերին եկի. դատիկն անարկի ին (25) էր»:²

Կաֆայեցու տարեգրութունը վերջանում է 1658 թվականի դեպքերի հիշատակությամբ.

«Թվականիս հազար ամի,
Հաքիւր եւ եօթ էր ամիի,
Եւ ամիսն էր ասորիի,
Որ լսեցաք ռոգարմիի և կոծելի,
Մահն պարոն Գրիգորի...»:³

Զնայած տարեգրության վերջից թերթեր են ընկել, սակայն պրակների դասավորութունից և վերջին քայքայված թերթերի վրա կարդացվող տեքստից անհավում է, որ վերը բերված ոտանավոր հատվածը Կաֆայեցու վերջին հիշատակարանից է: Կաֆայեցու մի փոքրիկ ոտանավոր հիշատակարանից երևում է նաև, որ նա իր ծերության հասակում գտնվել է նյութական որոշ կարիքի մեջ:

«Փող չունիմ հար հատուցման,
Խիստ անմարակ, անօգնական,

Աստիճ չունիմ տեղ մնացական,
Եւ ոչ անդինըն համգտեան»:⁴

Տարեգրության բովանդակութունից երևում է, որ խաչատուր երեցն իր Տարեգրութունը գրել է ոչ թե մի տարում, այլ մի շարք տարիների ընթացքում: Այսպես, 1631 թվականի պատմական դեպքերի մասին խոսելիս, Կաֆայեցին գրում է. «Թվականն ՌՁ (1631)... այսօր չարաթօր է, ասորի Լ (30) է. այս խաչատուր վարդապետը եկաւ ան սահաթին մտաւ նստել գնաց. Աստուած բարի ճանապարհ տայ»:⁵

Տարեգրության հետևյալ շարադրութունից երևում է, որ խաչատուր երեցը 1631 թվականից հետո Տարեգրութունը շարունակում է ևս 27 տարով:

Կաֆայեցու Տարեգրութունը պարունակող ձեռագիրն իր բովանդակությամբ տաղարան է: Նա ՀՍՍԻ Մատենադարան է եկել Երևանի Գրական թանգարանից, ուր գրանցված է եղել № 395-ի տակ: Նա թանգարան է եկել նոր Նախիջևանի ձեռագրաց հավաքածուի հետ միասին: Ձեռագիրն այժմ ՀՍՍԻ Մատենադարանի սեփականությունն է և գրանցված է 7709 թվահամարի տակ:

Կաֆայեցու ձեռագիրն ունի 245 թերթ: Պրակները խառնված են: Ձեռագրի մեծությունն է՝ 15×11×4,5 սանտ.: Կաղմը — առաջ կարտոնից է եղել, իսկ վերջինս Մատենադարանի կաղմատանը կաշեպատվեցիկ կաղմված է: Կաղմի ներքին կողերը պատած է կտավով: Պահպանակներ չունի: Ձեռագրի վիճակն անբավարար է:

1) խաչատուր երեց Կաֆայեցու Տարեգրութունը, էջ 26—27.

2) Նույնը, էջ 226.

3) Նույնը, էջ 37.

4) Մենք այս մասը տեղեկությունները բերում ենք այն պատճառով, որ ընթերցողը չէր կարող տարեգրության հեղինակին ճանաչել հետ, որը դարձյալ ունի խաչատուր քահանա անունը, ասորի է Կաֆայում և ժամանակակից է մեր հեղինակին:

5) խաչատուր Կաֆայեցու տարեգրութունը, էջ 32.

6) Նույնը, էջ 20.

Սկզբից և վերջից թերի է: Կան նաև մի-
ջից ընկած կամ կտրատված թերթեր:
Տեղատեղ ձեռագրի տեքստը եղծված է և
անհնար է ընթերցել: Որոշ տեղերում կան
փակցրած թերթեր: Ձեռագրի նյութը
թուղթ է: Գրված է միասյուն նոսր գրով:
Կան նաև դատարկ, չգրված էջեր (թ. թ.
121բ, 169բ, 238բ): Վերնադրերը գրե-
ված են կարմիր թանաքով: Տեքստերի ըս-
կզման երևում պատահում են թուշադրեր,
հանգուցադրեր և կիսախորաններ՝ դունա-
թափ և հասարակ դժագրություններ: Ձե-
ռագրի գրիչն ինքը, հեղինակն է: Նա ձե-
ռագիրը գրել է սկսել 1620 թվից: Հիշա-
տակարան ունի թ. թ. 67ա և 114բ-ում:

Տաղարանում առդեր ունեն Գրիգոր
Աղթամարցին, Առաքել Վարդապետը, Նա-
ղաշը, Ղուլ օղլին և ուրիշները:

ՀՄՍՈ. Մատենադարանի № 7709 առ-
դարանից մինչև այժմ օգտվել է ահագն-
միկոս Մ. Արեղյանը իր արժեքավոր «Գու-
սանական ժողովրդական տաղեր, հայրեն-
ներ և անտուններ» խորագրի կրող աշխա-
տության մեջ: Նա տաղարանից վերցրել է
երեք տաղ՝ «Դիշերս ես ի խում էի...»,
«Ոնց որ գիրկն ու ծուց էաք...», «Այ իմ
տղայ, իմ տղմար»: Տաղերը հիշված են
պայմանական «ԹԳ» նշանագրերի տակ:
Ձեռագրի մասին ահաղ. Մ. Արեղյանը
գրել է. «ԹԳ.—Երևանի պետ. թանգարա-
նի ձեռագիր № 395: Օգտվել էմ ան-
ձամբ»¹⁾

Ահաղ. Մ. Արեղյանը ոչինչ չի գրել
ո՛չ տաղարանի գրչության ժամանակի, ո՛չ
գրչի և ո՛չ էլ տաղարանի պարունակած
Տարեգրության մասին:

Կաֆայեցու Տարեգրության վերաբե-
րության մեջ, որքան մեղ հայտնի է, չեն
խոսել նաև այլ անձնավորություններ: Նա
մինչև այժմ դառնում է անհայտ, չու-
սումնասիրված և չհրատարակված փյնա-
կում:

Կաֆայեցու Տարեգրության մեջ ար-
ժեքավոր տեղեկություններ կան Ֆլմիած-
նի կաֆա ուղարկվող նվիրականների և հայ
եկեղեցական առանձին հարցերի մասին:
Այսպես օրինակ, 1656 թվին էջմիածնից ե-
կած նվիրակի մասին կաֆայեցին հետևյալ
տեղեկությունն է տալիս. «Նուրբակ եկա
Գարրիէլ Վարդապետն էջմիածնայ լուսա-
րուղի մեռնաւն սուրբ Սարգիս Հովի
Հրեշտակապետն, ետոյ զնայ Ղարասու,
Պաղչայարայ, ի Կիլիով, Ղրիմ և զեղա-
րիքն... զամենեւեւն նուիրակեց, սուրբ
դատվին իմ ժամ արաւ ի սուրբ Թորոս՝
տէր Սարգիս արեղայն և երկու սարկա-
ւաք ընդ նմա»²⁾

Ուշագրության արժանի է, որ Ղրիմի
հայ լուսավորչական համայնքները, քա-
ղաքական ամենածանր պարագաներում ան-
գամ, ամենատեսիլ կերպով կառված են և-
ղել Մայր աթոռի, Հայոց հայրապետու-
թյան հետ: Ֆլմիածնից եկած ամեն մի
պատվիրակ մեծ ուրախությամբ ընդունվել
և հարգվել է նրանց մոտ: Ֆլմիածնի նը-
կատմամբ ցուցաբերվող կենտրոնախույս
ամեն մի ձգտում ճնշվել և անդամահատ-
վել է հենց իրենց, հավատացյալներին
կողմից: Այդ մասին անչափ հետաքրքա-
կան տեղեկություններ կան Կաֆայեցու
Տարեգրության մեջ:

Տարեգրության մեջ բազմաթիվ տեղե-
կություններ են բերված դանադան բնական
պատահարների՝ սովի, հեղեղումների,
ձմրան ցրտերի, երկրաշարժի և այլ պա-
տահարների մասին: Այսպես օրինակ, 1631
թվին հուլիսի 5-ին Ղարասու քաղաքում տե-
ղի է ունենում մեծ հեղեղում, որի մասին
կաֆայեցին գրում է. «Յուլիս հինգ, աւր
Կիրակիւն. յարասու քաղաքին Աստուած
բարկացաւ վասն մեղաց մերոց. անձրիւ
եկաւ, որտուտ եղեւ կածկրտուն: Հեղե-

1) Պրոֆ. դոկտ. Մ. Արեղյան, Գուսանական ժողովրդական տաղեր, հայրեններ և անտուններ, Երևան, 1940 թ.:

2) Պատմություն Կաֆայեցու Տարեգրությունը, էջ 33.

զա (որը մահացել է 1756 թվին), ¹⁾ Մահումեղ-Գիրեյ (18-րդ դարի հեղինակ)²⁾ և Ֆուհրուդին (17-րդ դ. վերջի և 18-րդ դարի սկզբների պատմիչ)³⁾։ Կան նաև Ղուխի պատմությանը վերաբերող մի շարք մավերագրեր, որոնք ամփոփված են զանազան ժողովածուներում և հրատարակված Օղեսայում⁴⁾։

Խաչատուր երեց Կաֆայեցու Տարեգրության ուսումնասիրությունից պարզվում է, որ Կաֆայեցու Տարեգրությունը 17-րդ դարի 20—70-ական թվականների Ղուխի սրատական իրադարձությունները չ'ընդգրկող միակ պատմական աշխատությունն է։ Նա դեպքերը նկարագրել է որպես ակնանտես։

Կաֆայեցու աշխատությունն առանձնապես արժեքավոր է հայ մատենագրության պատմության համար։ Նա միակ մեզ հասած պատմական աշխատությունն է հայերեն լեզվով, որը պարունակում է Ղուխի պատմությունը։ Հայկական մատենագրության մեջ մինչև այժմ մեզ հայտնի էին հայ մատենագիրների կողմից հարեան ժողովուրդների մասին գրած մի շարք պատմական աշխատություններ։ Այդ շարքում կարելի է թվել՝ աղվանից, պարսից, բյուզանդացոց, հնդկաց և այլ պատմություններ։ Սակայն Ղուխի սրատմության վերաբերյալ հայագիտության մեջ մինչև այժմ ոչինչ հայտնի չէր։ Այժմ արդեն պարզվում է, որ մեր գրասեր պապերը չեն թերացել այստեղ ևս, և Կաֆայեցու ներկա Տարեգրությունը դալիս է ծածկելու այդ բացը։ Ի՞նչ խաներ են եղել Ղուխում, ինչպիսի հարաբերության մեջ են գտնվել նրանք տաճիկական կառավարության հետ, ինչպիսի՞ հարաբերություն է գոյություն ունեցել Ղուխի և նը-

րանց հարեան սուլտան, լեհական և այլ կառավարությունների միջև, ի՞նչ քաղաքականություն են վարել խաներն իրենց հպատակների նկատմամբ և այլն։— Ահա այն կարևոր պատմական փաստերը, որոնց վրա ուշադրություն է դարձրել Խաչատուր երեց Կաֆայեցին իր Տարեգրությունը շարադրելիս։

Խաչատուր Կաֆայեցու Տարեգրության մեջ Ղուխի պատմությանը վերաբերող իրադարձությունները հիմնականում պարտվում են վեց խաների շուրջը՝ Ջանի-բեկ-Գիրեյ II-ի (1610—1623, 1627—1635 թվականներ), Մահամեղ-Գիրեյ III-ի (1623—1627 թ. թ.), Իսայեթ-Գիրեյ I-ի (1635—1637 թ. թ.), Սելեմեթ-Գիրեյ I-ի (1635—1641 թ. թ.), Մահամեղ-Գիրեյ IV-ի (1641—1644 թ. թ.) և Իսլամ-Գիրեյ III-ի (1644—1654 թ. թ.) շուրջը։

Կաֆայեցին իր Տարեգրության մեջ մեծ տեղ է տվել Ղուխի թերակղզում տեղի ունեցող միջխանական կռիվներին, հատկապես խանական գահի շուրջը ծավալվող պայքարին։ Այսպես, 1624 թվի մայիսի 14-ին, եղբայրներ Տուլյեթ-գիրեյ սուլթանի և Ջանբեքիր խանի, և եղբայրների՝ Շահին-Գիրեյի և Մահամեղ-Գիրեյի միջև սկսված կատաղի պայքարը Կաֆայեցին հետևյալ ձևով է նկարագրում.

«Դարձեալ նոր սքանչելիք եւ զարմացումն ամենեցոյն, որ եկաւ ի Կաֆա Ճանսիլ-քերախանն եւ Տուլյեթ-Գերէ սուլթանն մայիսի ԻԴ (24), որն երկուշաբթի։

(Այս խաները դուրս էին գլված Ղուխից և տեղի խաներն էին Շահի-Գիրեյը և Մահամեղ-Գիրեյը)։ Եւ եղև սասանումն ամենացուն եւ բարկութիւն մեծ քաղաքիս մերում, եւ ոչ դառնէին կերակուր ամենեքեան մարդիք եւ անասունք։ Զի փա-

1) Ռիզայի պատմությունը վերնագրված է «Աս-իրու-ս-սիյար-Ֆի ախմարի Մայլուկի Թաթար», այսինքն՝ «Նոթն ժողովների տեղեկությունները Թաթարական Թագավորների մասին»։ Ռիզայի այս պատմությունը հրատարակել է Երես. Դադի Բեկը 1833 թվին։

2) Մահամեղ-Գիրեյի այս աշխատությունը մնում է դեռ ևս հրատարակված վիճակում։

3) Ֆուհրուդինը ևս գտնվում է հրատարակված վիճակում։

4) Ղուխական խաների փաստաթղթերի ժողովածուների մանրամասն բերվող աղբյուրն տես Խ. Խոմիրով, Источниковедение, т. I. Москва, 1941 г.

կեալ եղեն ամենայն դրուներ և ամենայն մրճածախք, մսածախք և հացածախք՝ վասն բաղմանալոյ անօրինաց ի վերայ քաղաքիս: Հն (75) օր պառկեցան քառասուն խառըրդայ: Եւ անօրէն շանպէքերէ խանն եւ Տօլլէթ քերէ սուլթանն եւ այլ պաղի անօրէնք պատեցին դմեղ. եւ ամեն օր պատերազմէին ընդ իրար ի վերայ Շահին քէրային եւ Մէհմէտ քէրային. ոչ կարէին յաղթել...»¹⁾

Միջխանական այս կռիւները ծանր հետեանքներ են ունենում կաֆայցիների համար: «Ոտք չորացան,— դրում է Կաֆայցիներ— աղբիւրք ցամաքեցան, կառք պակասեցան. աղաղակէին անասունք եւ խոտ ոչ գտանէին, հողն լիղէին: Մարդիւք ողբային, կանայք կոծէին, տղայք լային. եւ հայրք մխիթարէին՝ թէ այսօր եւ վաղն մեզ խաղաղութիւն կու լինի, եւ փակեալ դրուներ կու բացի, եւ մեզ ուրախութիւնն կու լինի. այսօր եւ վաղն առել եւ դիմիւնս մխիթարելով, մինչեւ եղեւ զրաւ մարտի...»²⁾

Միջխանական այս պատերազմը վերջանում է նրանով, որ Շահին-գիրեյը և իր եղբայրը պարսութեան են մատնում Ջանիբեկ-Գիրեյին. «Եւ կատարումն օր առաջի օդոստոսի, եւ կիրակի բարիուս առաւօտուն, փախստական եղեւ շանպէքէրան եւ սուլթանն. պայրախ առին եւ հաղլս ի խառըրդան ընկան: Եւ զօրքն կոտորեցան, մեռնողն մեռան, ողջք փախան, այլք ծովն լցվան եւ այլք լիրկն եւ ի Մահալան ընկան եւ հաղլով դերծեցան: Հինգ վեց հարիւր յերկան գտակ դերի վարեցաւ, ՋՂ (990) ի սուր սուսերի մաշեցան: Բաղում լաշ դիղեցան ի ծովեղերն. երկու վաղիր սատակեցաւ, եւ մէկ մեծ վաղիր հարայի եղաւ, մտան խառըրդան եւ զնացին»³⁾

Պատերազմից հետո տեղի խառն զարքերն սկսում են թալանել տեղացիներին.

«Եւ Շահին քէրայն յունէր բաղում ասքէր՝ մոք, նողայ... պատեցին բոլոր պարիսպն ի Մահալան. և բաղում տներ տապալեցին, եւ մեղ կողոպտեցին, չախչըներ քանդեցին, եւ վանորայն յաւիրեցին, եւ բաղում չարիք տիրեցին ի վերայ մեր...»⁴⁾

Ղաիմի խաները, օգտուելով ստեղծված բարենպաստ քաղաքական պայմաններից, ուժեղացնում են իրենց ճնշումը հպատակների վրա—կաշառքներ են վերցնում նրանցից և ֆարհի նոր տեսակներ կարգում: Այդ հարկերի մի տեսակի, «հասլ» կոչվող հարկի մասին, Կաֆայցիներ՝ Ինայիթ—գիրեյի վարած քաղաքականութեան կապակցութեամբ դրում է. «Եւ ետ այնորիկ Կաֆայցուս խարածն եկաւ, հասլը հարճ կանեն, անունն անիծած ու զինքն անիծած, մարդոյ դուխ երեք երեք ոսկի: Քրիստոնիայք լացին, ողբացին՝ թէ ճար չունենք տալոյ, էմլըն երկու ոսկի է, երկու առ, թէ չէ նաւն կու մտնումք կերթամք թաղաւորին, մեզի արժ տուր: Մէկ դատաւոր մի կայր Խեւ Հողապարիսպէն, որ անունն ասեն Մուսա օղլի կամ թէ՛ Մութհի օղլի. անանիծածն էր դատաւոր, էմր չարաւ երկու, այլ՝ երեք, վասն այն պատճառին համար, որ ըռըլաթ կերել էր քրիստոնեայք չըլար մնացին...»⁵⁾

Սաչատուր Կաֆայցու Տարեգրութիւնը հետաքրքիր տեղեկութիւններ է պարունակում ուռա-ղախական հարաբերութիւնների, հատկապէս Ղաիմի խաների և ուռաց զորամասերի միջև տեղի ունեցող ընդհարումների մասին: Հետաքրքիր են հատկապէս Կաֆայցու Կետեյալ դեպքերի նկարագրութիւնները.

1616 թվականի Կաֆայում տեղի ունեցող ընդհարման մասին, երբ ուռաներին հաջողվում է վերցնել Կաֆան, իսկ հետո՝ հետ նահանջել:

1) Սաչատուր երեք Կաֆայցու Տարեգրութիւնը, էջ 9:

2) Նույնը, էջ 9—10:

3) Նույնը, էջ 9:

4) Նույնը, էջ 10:

5) Նույնը, էջ 25:

1617 թվականի Մեմի փառայի գլխավորությամբ ուսաց վրա նախաձեռնած արշավանքի մասին, երբ Մեմի փառան սպանվում է և դնացած տասը նավից երեքը բռնվում:

1622 թվականի ուսաց զորքերի 33 նավով Կաֆայի նավահանգիստը մտնելու մասին, երբ նրանց չի հաջողվում Կաֆան վերցնել, բայց վերադարձին վերցնում են Խաղրի լիմանը և տեղի 5 նավերը խլում:

1623 թվականի ուսաց զորքերի 30-000 հոգով Օրին Բերան քաղաքը վերցնելու և շատ գերիներ տանելու մասին:

1624 թվականի Քաշուտի ուսանների կազմակերպած արշավանքի մասին:

1625 թվականի Ղուիմի խաների միջև տեղի ունեցող կռիվներում 12-000 ուսու զինվորների մասնակցությամբ մասին:

1628 թվականի Քաշուտի ուսանների Կաֆայի վրա հարձակվելու մասին:

1629 թվականի ուսաց զորքի ղեկավար Ղուիմ կազմակերպած արշավանքի և Ղաբասուն, Մանգուսյուր և Մուղտան վերցնելու մասին:

1649 թվականի Ղուիմի խաների և օսմանյան միացյալ բանակների Ազովի վրա կազմակերպած անհաջող արշավանքների մասին, որի ժամանակ հայերը և կադակները հերոսական դիմադրություն են ցույց տալիս: Այս մասին քիչ հետո:

Եվ, վերջապես, 1650 թվականին Ղուիմի խանի ղեկավար Մոսկվա կազմակերպած արշավանքի մասին:

Բերենք նշված ղեկավարից մեկի, Մեմի փառայի 1617 թվին կազմակերպած արշավանքի մասին Կաֆայեցու տված փոքրիկ տեղեկությունը. «Թվին Ռեզ էր, տասը խառըրդայ ուսուսին վրայ գնաց: Մեմի փառան Կաֆայի էր, բարիտես եւ բարի մարդ էր, եւ աշխարհի բարեկամ էր: Ուսուսն ըսպան դնա եւ երեք խառըրդան իսո, եւ շատ մարդեք գիրի տարաւ, եւ ոմանք ի սուր մաշեցան, եւ այլ ոմանք փախստական եղին: Ամսեանն օգոստոսի

մեծ տրամուխիւն եղաւ Կաֆա քաղաքին եւ սասանումն ամենեցուն»¹⁾

Նման պատմական տեղեկությունները, ինչ խոսք, մեծ արժեք են ներկայացնում ինչպես Ղուիմի, այնպես և ուսաց պատմության համար:

Պաշտուր Կաֆայեցու Տարեգրությունը մեծ արժեք է ներկայացնում նաև Ղուիմի հայ դադուքի պատմության, և, ընդհանրապես, հայ—ուսու հարաբերությունների պատմության համար: Նա փաստական արժեքավոր տեղեկություններ է պարունակում Ղուիմի հայ դադուքի Ղուիմի պատմության մեջ ունեցած դերի մասին: Պարզվում է, որ Ղուիմի և նրա շրջապատի հայությունը 17-րդ դարում քաղաքական աչքի ընկնող կշիռ է ունեցել: Հայերն իրենց կազմած զորամասերով միջամտել են միջխանական կռիվներին: Այսպես օրինակ, Շահն-գիրեյի և Պանդամուրի 1628 թվի կռիվի ժամանակ Բեսարաբիայից և Լեհաստանից հայկական զորքեր են եկել և միջամտել այդ կռիվին: Այդ մասին Կաֆայեցու մոտ կարդում ենք.

«Թվին Ռեզ (1628) թվականին դարձեալ Շահին քէրայ սուլթանն հեծել վերուց ու ելաւ դնաց ի վերայ Պանդամուրին: Թոււնան անցաւ Շահին քէրայն բազում առքէրով: Եւ ետ այնորիկ մեծ բարկութիւն եղեւ Պանդամուրին. չթախին հետ մեկ եղաւ ու սուլթանն կոտորեցաւ ու առքէրն ամէն չարդեցաւ, պարոնայք մեռան, մոզաներ մեռան, սուլթանն ճորով խալրեցաւ. Թոււնայէն անցաւ, թախթըն եկաւ: Եւ ետ այնորիկ Պանդամուրն ետեւանցն եկաւ ի Պաղչասարայն, չորս քովըն պարտեց ու մէջ խոռ. ամիս մնումն հանց զապուն արաւ, որ փախելու կամ կուելու ճար չունէին, որ մէկ տաս օր մալ չերթար, աւեր կանէին. իւրեանց կերակուր չի քար, ձիանուն խոռ չի քար. անիծած նողայն չորս քովն աւերեց՝ որ թալեց, տըներ ու տեղքանք քակեց, ոչ խար ու տաւարն քիչեց... Հարուսիւն շատ արաւ, գորն տսենք կամ գորն պատմեք:

1) Պաշտուր երեց Կաֆայեցու Տարեգրությունը, էջ 9:

Եւ այնորիկ Աստուած լուս արաւ. ԲԺՌ (12-000) հայ եկաւ Գոռելէ, խանն ու աս-
քէրն խապար չունէին. մին սուլթանն զե-
տակ էր: Ձեռաց տակէ մարդ խըրկել էր:
Երբ որ եկան, զարկին թուրն Նողային,
խանն սուլթանն քիչ մն հաստատեցան ու
կոխ Կանկնեցան— բաղում ասքէր մե-
ռան»:¹⁾

Տարեգրութեան մեջ առանձնապես հե-
տաքերէր է 1640 թվականին Ազով քաղաքի
վրա հարձակման: Թաճկական և Ղուխի
խանութեան զորքերին՝ տեղացի ուսու և
հայ բնակիչներին ցույց տված հերոսական
դիմադրութիւնը:— Տաճկական և Ղուխի
խաների զորքերը հարձակվում են Ազովի
վրա, իսկ հայ և ուսու բնակիչները ձեռք-
ձեռքի տված ո՛չ միայն պաշտպանում են
իրենց քաղաքը, այլ և ջարդում թշնամու
խոշոր ուժերը: Կաֆայեցիին այդ մասին
գրում է.

«Թվականին ԲԶԹ (1640) բաղում աս-
քէր եկաւ նաւով, ծովով, խաւրդայով,
խայխով իրաստամանու սանձախէն. Զ (900)
թիմարի սպահիք: Յիսուս—վաթսուն չա-
տըր զարկին, եկան Թօփրախալան, Կալա-
յին առջեւ նստան: Եւ ետոյ ձի առին,
արապայ առին, ելան դնացին Ազախ՝ ամ-
սեանն յունիսի՝ խանն, փաշայն, թող
այլապաղի պէկլէր պէկլիներ, ծանտըր փա-
շաներ, ծանտըր պարոնայք, ուսումիլի
ասքէր, Պօլսէն ասքէր, Թաթար, նողայ,
չղաթայ, չէրքէս, ոչ կարեմ գրով պատմել
կամ լեզվով. երկու թաղաւորի ասքէր ՀԲ
(72) միլլաթէն կային: Գնացին Ազախ,
կոտորեցան. եւ շատ դատեցան, դատարկ
ելան: Ազախ չի կարցան առնել ու ամօ-
թալից դարձան. ԽՈՒ (40-000) գլխաւոր
մեռան. եւ այլապաղիքն ուլ կարէ պտո-
մել... Հայրն բերթէն ի դուս լաղըմ ա-
րաւ, որտեղ որ օսմանլըին ասքէրն կար,
ցիր ու ցար, արաւ, սօխախ սօխախ իրաց-
ամէն լաղըմ թափելուն Բ (1000) հոգի
երկինքն ի վեր կու ելանէր եւ դարձեալ ի
վայր կու իջնէր լէշն...»:²⁾

Կաֆայեցու Տարեգրութիւնն արժե-
քավոր է և հայ բարբառների պատմու-
թեան ուսումնասիրութեան համար: Օրի-
նակ, ինչ բարբառով է խոսել և գրել Կա-
ֆայեցի մեր հայ հատվածը — դա հայա-
դիտութեան համար երկրորդական հարց
է: Այդ հարցը կարեւոր է մանավանդ այն
տեսակետից, որ Կաֆայի հայ բնակչու-
թեան մեծ մասը, ինչպես հայտնի է, գաղ-
թել է Անիից և բնական է, որ անեցիկե-
րի նախկին բարբառից մինչև 17-րդ դարը
չատ բան պահպանվում էր:

Առանձնապես հետաքրքիր են ինչպատուրի
հետևյալ արտահայտութիւնները:—

«Չախննի քակվել է» (Չրաղացները
քանդվել են),

«մէկ անիծածն իզարկ սուլթանին»
(մի անիծածը խփեց սուլթանին),

«խանն թալլեց, տուքանք խոռ» (խանը
թալանեց, տուգանք վերցրեց),

«բաղում քանչիլիք եղեւ» (չատ սքան-
չելիքներ եղան),

«չի քար», «չիթող» (չկար, չթողեց),

«բերդին դովին փակեցին» (բերդի
դռները փակվեցին),

«մէկ քանի հոգւոյ մալ» (մի քանի
հոգու էլ),

«քիչ մն դիժար եղեւ» (մի քիչ դժվար
եղավ),

«հոս չէր», (այստեղ չէր),

«կուլինա» (կլինի),

«կու խմեն» (կխմեն),

«հանց տարաւ» (այնպես տարավ որ),

«խրկեց» (ուղարկեց),

«տեղ մն տուր» (մի տեղ տուր),

«քովն» (մոտը),

«յաւիրեցին» (ափրեցին), և այլն:



Կաֆայեցու տարեգրութեան վերջին է-
ջերից մեկի վրա (Թերթ 23 ա) տեղավոր-
ված է յոթը տողից բաղկացած մի ծած-
կադրութիւն, որը մինչև այժմ չի վեր-

¹⁾ Խաչատուր երեց Կաֆայեցու տարեգրութիւնը, էջ 12—13:

²⁾ Նույնը, էջ 12—13, 26—27:

ծանված: Այդ ծածկագրութիւնը կաֆայեցու Տարեգրութեան տեքստի օրդանական մասն է կազմում և գրված է իր, կաֆայեցու ձևով: Տարեգրութեան ուսումնասիրութեան կապակցութեամբ անհրաժեշտ եղավ զբաղվել նաև այս ծածկագրութեամբ և վերածնել այն: Ծածկագրութեանը նախորդում է կաֆայեցու գրած երկու տողից

բաղկացած մի նախադասութիւն, որը կապվում է ծածկագրութեան հետ: Ծածկագրութեանից հետո կաֆայեցին սովորական ձևով շարունակում է իր Տարեգրութիւնը: Ստորև բերում ենք մտողջ ծածկագրութիւնը:— «Այս է փակագիր. իմաստունն իմանայ. եւ անիմաստն գարմանայ. ով խորայր եւ՝ զիս յիշեայ գրադմանդս:

գի.	ի.	Ա.	էձ.	Ա.	ՍՍ.	88.				
ՎԾ.	ՎԾ.	ՍՍ.ՍՍ	է.	ՍՍՍՍ.	է.	ՎՎ.				
ՍՍ.	է.	ԵՌ.	ԹՌ.	ԺԺ.	ԺԵԺԵ.	ԺԺ.	ՆՆ.	88.	ՌՌ.	
ԿԹՂԿՍ.	ԼԼ.	ԺԺ.	ԵՌ.	Ա.	ԼԼ.	88.	ՌՌ.			
ՌՇ.	ՌՇ.	Ա.	ԵՌ.	ԲԲ.	Ա.	ՄՄ.	ՄՄ.	ԺԺ.	ԼԼ.	88.
ԽԵ.	ԽԵ.	88.	ՌՌ.	ՌՌ.	ԺԺ.	ՃՃ.	է.	88.	ՄՄ.	

Թվին. 2Թ. էր բազում ասքէ<ր> եկավ կաֆան:

Հայ ծածկագրութիւնների վերծանութեամբ և նրանց սխտեմատիղացիայով, ինչպես հայտնի է, զբաղվել է անվանի գիտնական ակադ. Հ. Աճառյանն իր «Հայոց գրերը» աշխատութեան մեջ, որը մաս մաս տպվել է «Հանդէս ամսօրեայ»-ում, իսկ 1928 թվին հրատարակվել առանձին գրքով: Կաֆայեցու ծածկագրութեան բանալին, ինչպես պարզվեց, դումարադիր ծածկագրութիւնն է:

Կաֆայեցու ծածկագրութեան կառուցվածքի հետ ծանոթանալուց հետո մենք նկատեցինք, որ այն վերծանելու երկու հնարավորութիւն դոյութիւն ունի— մեկը սկզբից, ուր վերջանում է հեղինակի նախարան երկտողը՝ «զիս յիշեալ գրադմամեդս», իսկ մյուսը՝ միջից, ուր գործ է անված «Կթղկս» հապաված բառը: Ենթադրում էինք, որ առաջին դեպքում ծածկագրութիւնը պիտի սկսվի գրչի անվան հիշատակութեամբ, իսկ երկրորդ դեպքում, կարծում էինք, որ «Կթղկս»-ից հետո պիտի լինի ժամանակակից կաթողիկոսի անունը, ինչպես սովորաբար հիշատակարաններում պատահում է «ի կաթողիկոսութեանն», «ի հայրապետութեանն»,

«իշխանութեանն» և ապա՝ տվյալ անձնավորութեան անունը:

Նախ փորձեցինք վերծանել սկզբից, սակայն մեր ջանքերն ապարդիւն անցան, որովհետեւ մենք սխալմամբ հեղինակի անունը փորձում էինք դնել ո՛չ թե «Խաչատուր երէց» ձևով, այլ «Պաշգոռոզ», ինչպես հիշել է ինքն իրեն Տարեգրութեան առաջին մասում:

Մտեցման երկրորդ փորձը ևս մեզ ոչ մի արդունքի չհասցրեց, չնայած մենք ճիշտ էինք ընտրել ժամանակակից կաթողիկոսի, Փիլիպոս Աղբակեցու անունը (նա հայրապետական աթոռի վրա է դրոյվել 1633—1655 թվականներին):²⁾ Փիլիպոս անվան երկրորդ և չորրորդ գրերը կրկնվում են, ուրեմն, ենթադրում էինք մենք, «Կթղկս» բառից հետո ծածկագրութեան երկրորդ և չորրորդ նշանադրերը պիտի կրկնվեն, բայց, դժբախտաբար, չէին կրկնվում:

Փորձեցինք ծածկագրութեան վերծանութեանը մոտենալ այլ ձևով— կաթողիկոսի անունը փնտրել ոչ թե «Կթղկս» հապաված բառից հետո, այլ նրանից առաջ: «Փիլիպոս» անունը բաղկացած է յոթը տառից,

1) Հ. Աճառյան, Հայոց գրերը, Վիեննա, 1928 թ.:
2) Մ. Օրմանյան, Ազգագրատուն, 2-րդ հատոր, էջ 2:

խակ մենք կարծում էինք, որ պիտի լինի «Փիլիպոս կաթողիկոս» ձևով, ուստի և «ԿԹՂԿՍ» բառից յոթը նշանադիր հետ դրնալով հանդիպեցինք «ԹՈՒ» ծածկադիր նշանին: Այդպես վարվելով մենք նկատեցինք, որ երկրորդ և չորրորդ ծածկադիրը «ԺԺ» է և կրկնվում է: Մեղ պարզ դարձավ, որ ծածկադիրը դրված է դումարադիր ծածկադրով, որովհետև «ԺԺ»-ի թվական էկվիվալենտն է «Ի» ($10 + 10 = 20$),

«ԹՈՒ»-ինը «Փ», և այլն: Այնուհետև դրվար չէր վերծանել ծածկադրի մյուս մասերը: Որոշ դժվարությունների միայն մենք հանդիպեցինք չորս տառ ունեցող ծածկադիր նշանադրերի վերծանության ժամանակ, բայց դումարադիր ծածկադրության ընդհանուր սկզբունքի հիման վրա այդ ևս դժվար չէր հասկանալ:

Ծածկադրությունը վերծանվում է

ՁԽ	ա	չ	ա	ա	ն					
ՁԻԻ	Ա.	ԷՃ	Ա.	ՍՍ.	ՅՅ					
Վ			Բ	Է	Բ		Է	Կ		
ՎԾ	ՎԾ	ՍԾ	ՍԾ.	Է	ՍԾ	ՍԾ	Է	ՎՎ		
ա	Է	Բ	Փ	Ի	Լ	Ի	ա	"	"	
ՍՍ.	Է.	ԵՌ.	ԹՌ.	ԺԺ.	ԺԵ. ԺԵ.	ԺԺ	ՆՆ.	ՅՅ	ՌՌ	
	Կ	Ի	Բ	ա	Կ	"	"			
ԿԹՂԿՍ.	ԼԼ.	ԺԺ.	ԵՌ	Ա.	ԼԼ	ՅՅ.	ՌՌ			
	Վ	ա	Բ	ա	ա	ն	Ն	Ի	Կ	"
ՌՇ	ՌՇ	Ա.	ԵՌ.	ԲԲ.	Ա.	ՄՄ.	ՄՄ	ԺԺ.	ԼԼ	ՅՅ
դ	"	"	"	Ս	Ի	ա	Է	"	ն	
ՊԵ	ՊԵ	ՅՅ.	ՌՌ	ՌՌ.	ԺԺ	ՃՃ.	Է	ՅՅ.	ՄՄ.	

Այսպիսով, ծածկադրությունը կարդացվում է. «գլխաշառուր էրեց տէր փիլիպոս կաթողիկոս. կիրակոս վարդապետ. Նիկողոս Սիմէոն»: Պաշտօնը երեցն ինքը հեղինակն է, փիլիպոս կաթողիկոսը-ժամանակակից կաթողիկոսն է, իսկ մյուսներն իր ժամանակի աչքի ընկնող անձինք են: Ծածկադրության տեքստը մեր մատենադրության համար առանձին արժեք չի ներկայացնում:

Վերծանությունից հետո պարզվեց, որ Կաթոսյեցու ծածկադրության մեջ նպատակադրված կամ պատահական ձևով տեղ են դրել հետևյալ բարդացումները:—

1. Ծածկադիր նշանադրերի վրա հապավման նշանը դրված է կամայական ձևով—որոշ նշանադրերի վրա դրված է, իսկ որոշ նշանադրերի վրա՝ ոչ:

2. Բառերից առաջ «դ» նախդիրը դրած է ածված իր սովորական նշանակությամբ:

3. Ճիշտ նման ձևով իրենց սովորա-

կան հնչունական նշանակությամբ դործ են ածված «ա» և «է» տառերը:

4. Ծածկադրության որոշ թվանշաններ բերված են ոչ թե միանիշ թվական դումարով, այլ վուրդար ձևով—երկնիշ տառերի դումարով: Այսպես, դրված է ոչ թե «Հ», այլ «ԷԺ», ոչ թե «Ռ», այլ «ԵՌ», ոչ թե «Փ», այլ «ԹՈՒ», և այլն:

5. Որոշ տառերի նշանադրերը երկուսի փոխարեն չորս են: Քառանիշ այդպիսի ծածկադրերն են «ՊԵ ՊԵ», «ՌՇ ՌՇ», «ՄՄ ՄՄ», և «ՎՎ ՎՎ»:

Մյուս բոլոր ծածկադիր նշանադրերի կրկնանշաններ են՝ ԲԲ, ԺԺ, ԻԻ, ՃՃ, ՄՄ, ՅՅ, ՆՆ, ՌՌ, ՍՍ, ՎՎ:

Հապավված են «Թվկն» և «ԿԹղկ» բառերը: Առաջինը, ինչպես ասել ենք արդեն, «Թվական» բառն է, իսկ երկրորդը՝ «կաթողիկոս»:

«ՁԹ»-ն թվական է, ճիշտ ձևով պիտի լինի ՌՁԹ ձևով:

Ծածկադրության մեջ կատարված է մի սխալ— «Ր»-ն ծածկադրված է ՄՄ

ՄԾ» (այսինքն 2050+2050), փոխանակ ՄՇ
ՄՇ (այսինքն 2500+2500) :

Վերջին նշանադրի ճիշտ է կվիվալենտն
է «Բ» :

Այսպիսով, ծածկադրության համար,
ըստ առանձին խմբերի դասավորման, ու-
նենում ենք հետևյալ բանալին. —

Անփոփոխ	Կրկնակի քվական
ա—Ա	դ—ԲԲ
դ—Զ	ի—ԺԺ
է—Է	խ—ԻԻ
	մ—ՃՃ
	ն—ՄՄ
Թվական եկվիվալենտով	ո—ՅՅ
չ—ԷՃ	պ—ՆՆ
բ—ԵՌ	ս—ՌՌ
փ—ԹՌ	տ—ՍՍ
	ց—ՎՎ
Թվական քառանիշ	Հաղավուսմներ
դ—ԽԵ ԽԵ	Թվին—Թվական
վ—ՌՇ ՌՇ	կթղկ—կաթողիկոս
բ—ՍԾ ՍԾ	ԶԹ—<Ռ>ԶԹ
ւ—ՎԾ ՎԾ	

Խաչատուր Կաֆայեցին, ինչպես տես-
նում ենք, իր ծածկադրութունը կաղմել է
որոշ բարդացումներով, հարկադրելով հե-
տաքերվող անձանց մտածել, չարչարվել
նրա վրա։ Իդուր չէ, որ նա իր ծածկա-
դրության վերծանութունը համարել է
գիտակ մարդու գործ. «Այս է փակադիր,
իմաստուն իմանայ եւ անիմաստն զար-
մանայ» :

Ներկա փոքրիկ հոդվածում մի առ մի
թվել Կաֆայեցու Տարեդրության բոլոր
արժանիքները—անհնար է։ Այնտեղ նյութեր
կարող են դտնել ոչ միայն պատմաբան-
ները, այլ և մեր դրականադետները, մա-
թեմատիկոսները, լեզվաբանները և այլ
մասնագիտությամբ զբաղվող գիտնական-
ները։ Սակայն Կաֆայեցու Տարեդրության
մեջ մեզ համար ամենից արժեքավորը,

ամենից զնահատելին— այդ հայ և ռուս
ժողովուրդների հարաբերություններին վե-
րաբերող պատմական տեղեկություններն
են։ Նա հայերենով մեզ հասած միակ
պատմական աշխատությունն է, որը նպա-
տակ է դրել շարադրել Ղևիմի հայ հատ-
վածի պատմությունը, կապված Ռուս մեծ
ժողովրդի և Ղևիմի պատմության հետ։

Խաչատուր երեց Կաֆայեցու Տարե-
դրությունը մի նոր և անզնահատելի դանձ
է, որ դալիս է հարստացնելու մեր հայ
մատենաշարը։

Կաֆայեցու Տարեդրությունը մի ա-
վելորդ անդամ դալիս է ապացուցելու
մեր ջանասեր պապերի հոգատար վերա-
բերմունքը դեպի դալիք սերունդները—
նրանց համար բարոյական մեծ պարտք
է համարվել դրել և թողնել դալիք սե-
րունդին իրենց ժամանակաշրջանի հետա-
քրքրական և ոսկյա տարեդրությունները։

Պրոֆ. դոկտ. Ա.Շ. Ա.Ռ. Ա.ՀԱՄԵՍԱՆ

(Ս. Էջմիածնի գերագույն եզեւր խորհրդի գիտն. քաղաւար)